«Իրավունքի չարաշահման» վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ միասնական կարծիքի բացակայության պայմաններում՝ այն դեռևս համարվում է վեճի առարկա այն իմաստով, թե ի վերջո այն իրավախախտման ինքնուրույն տեսակ է, թե՝ իրավունքի սուբյեկտի կողմից իրավունքի իրացում:

ՀՀ աշխատանքային օրենսդրության գործող իրավանորմերի համապատասխան վերլուծության համատեքստում հոդվածում ներկայացված են աշխատանքային իրավահարաբերության հիմնական սուբյեկտների՝ աշխատողի և գործատուի կողմից աշխատանքային հարաբերություններում առավել հաճախ հանդիպող իրավունքի չարաշահման դեպքեր:

Տարբեր իրավիճակներում համադրելով գործնականում իրավունքի իրացման դեպքերը գործող օրենդրության նորմերի հետ՝ հեղինակը հանգում է այն հետևության, որ «Իրավունքը չարաշահող»ների համար անբարենպաստ իրավական հետևանքներ նախատեսված չեն, ավելին, նրանք առավելապես իրավական բարձր գրագիտություն, ինտելեկտ ունեցողներ են, քան պարզապես իրավունքի հնարավորություններից ուղղակի օգտվողներ կամ իրավունքը իրացնողներ, քանի որ բացառապես իրավական գրագիտության և գիտակցության որոշակի մակարդակի առկայության պայմաններում է հնարավոր կանխատեսել իրավունքի իրացման հնարավոր սխեման և դրա հետևանքները:

Annotation

During the labor relationships it happens when the implementation of rights by the right possessors accompanied, if not by a direct, but surely indirect violation of the rights of other subjects or disturbance the permitted limits of their rights. In legal theoretical literature this situation is known as “Abuse of rights” that can be considered as follows: frequent usage of legitimate rights, ill-intentioned application of law, the usage of an absence of the appropriate interpretation of legal norms in right holders’ favor, distortion of meaning of law, demonstration careless behavior accompanied by a distortion of the social meaning of law.

The author presents specific cases of misapplication of labor rights by the main subjects of labor relationships the employee and the employer, which are more often encountered in practice. The cases of misapplication of rights are analyzed in accordance with the correspondent articles of the Labor Code of RA. Comparison of different legislative acts with the practical application of labor rights, leds the author to the conclusion that there are no adverse legal responsibilities for abusers of labor rights.

According to the author, the abusers of labor rights are legal intellectuals than simply right implementers or applicants of the possibilities of rights, since only with a certain level of legal literacy and consciousness right possessors can predict about the scheme of implementing the rights and its’ possible consequences.

Аннотация

В ходе трудовых отношений нередко возникают такие ситуации, когда реализация права субъектом права сопровождается, если не прямым нарушением прав других субъектов, то косвенным нарушением их дозволенных пределов. Такое явление в юридической теоретической литературе более известно под названием «злоупотребление правом». Злоупотреблением правом можно считать частое использование правообладателем своих прав, злонамеренное и произвольное применение права, использование сложившейся ситуации в свою пользу в случае отсутствия соответствующего толкования правовых норм, неосуществление права, искажение смысла права, проявление недобросовестного поведения, сопровождающееся искажением социального смысла права.

В условиях отсутствия единого мнения в юридической литературе и толкования о злоупотреблении правом, оно до сих пор остается предметом спора в том смысле, что является ли оно самостоятельным видом правонарушения или все же оно является применением права субъектом права.

В данной статье представлены конкретные случаи злоупотребления трудовыми правами основных субъектов трудовых отношений работника и работодателя, более часто встречающиеся на практике в ходе трудовых отношений. Представленные случаи злоупотребления правами анализируются согласно соответствующим статьям Трудового кодекса РА. В различных ситуациях сопоставив законодательство с практическим применением права, автор склоняется к мысли, что в большинстве случаев для злоупотребляющих законодательством не установлено никаких неблагоприятных правовых последствий. По мнению автора, злоупотребляющие законом являются в большей степени правовыми интеллектуалами, чем просто пользователями возможностями права или правоприменительные субъекты, поскольку, только при условии определенного уровня юридической грамотности и сознания можно думать о схеме осуществления права и об его возможных последствиях.

Հիմնաբառեր՝ իրավունքի չարաշահում, բարեխիղճ վարքագիծ, ողջամտություն, իրավատիրոջ կողմից իրավունքների չարակամ իրացում, չարամտություն, այլ անձանց անուղղակի վնասի պատճառում, իրավական գրագիտության չարաշահում:

Ключевые слова: злоупотребление правом, добросовестное поведение, здравомыслие, злонамеренное осуществление прав правообладателем, злой умысел, причинение косвенного вреда другим лицам, злоупотребление юридической грамотностью.

Key words: Abuse of rights, conscientious behavior, sanity, misusage of rights by the right possessor, ill-intentioned conduct, misuse of legal literacy.

ԴԱՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ / JUDICIAL LAW / СУДЕБНОЕ ПРАВО

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

NALBANDYAN ANAHIT
PhD Student of the Institute of Philosophy, Sociology and Law of the National Academy of Sciences of the Republic of Armenia

НАЛБАНДЯН АНАИТ
Соискатель Института философии, социологии и права Национальной академии наук Республики Армения

ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԵՊԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

THE CONCEPT, ESSENCE AND SUBSTANTIVE FEATURES OF JUDICIAL PRECEDENT AND JUDICIAL PRACTICE*

ПОНЯТИЕ, СУЩНОСТЬ И ОСОБЕННОСТИ СОДЕРЖАНИЯ СУДЕБНОГО ПРЕЦЕДЕНТА И СУДЕБНОЙ ПРАКТИКИ*

Ամփոփագիր

Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն քննարկել է դատական նախադեպի և դատական պրակտիկայի հասկացությունը, էությունը, բովանդակային առանձնահատկությունները:

Հոդվածում անդրադարձ է կատարվում նաև դատական (դատավորի) հայեցողական խնդրին, քանի որ անգլոամերիկյան իրավական համակարգում նախադեպերը ձևավորվում են դատավորների ազատ հայեցողության շնորհիվ, որը խիստ սահմանափակված է մայրցամաքային (ռոմանագերմանական) իրավական համակարգում:

Մայրցամաքային իրավական համակարգում դատական նախադեպը, որպես կանոն, կրում է իրավամեկնողական բնույթ: Դատական նախադեպում արտացոլված իրավական նորմը, ըստ ընդունված կարծիքի, կրում է չգրված բնութագիր, չունի հստակ ձևակերպում, հաճախ անորոշ է և բարդ ձևակերպված: Իսկ դատավորը մեկնում է սկզբունքները, որպեսզի բացահայտի իրավունքը, որն անհրաժեշտ է կիրառել կոնկրետ գործի վերաբերյալ: Այդպիսի դեպքերում դատավորները չեն ստեղծում դատական նախադեպեր, այլ միայն կիրառում են համապատասխան սկզբունքները: Այսպիսով, բացառվում են իրավունքում բացերը, ինչպես նաև դատական ազատ հայեցողությունը:

Հեղինակը նաև եզրահանգում է, որ դատական նախադեպի մեկնության տառացի մեթոդը որոշակիորեն սահմանափակում է դատավորների հայեցողության իրավունքը, որը և՛ դրական կարող է թվալ, և՛ բացասական: Դրական է այն իմաստով, որ դատավորներն իրենց մեկնաբանություններում չեն կարող փոխել կամ լիովին փոխել օրենքի բովանդակությունը և իմաստը: Հետևաբար, այստեղ, ինչպես ամենուր, անհրաժեշտ է փնտրել «ոսկե միջինը»:

Ամփոփելով, հեղինակը նշում է նաև, որ նախադեպային իրավունքի խոցելի տեղերից մեկն է համարվում նախադեպերի հետադարձ ուժի դրույթը:

Սակայն պրակտիկայում բազմաթիվ փորձեր են ձեռնարկվել վերցնելու այդ թույլ կողմը և հաստատելու դատական նախադեպի գործողության հետագա սկզբունքը:

Annotation

In this article, the author has considered in detail the concept, essence, and substantive features of judicial precedent and judicial practice.

The article also refers to the issue of judicial (judge) discretion, because in the Anglo-American legal system, precedents are formed due to the free discretion of judges, which is strictly limited in the continental (Romano-Germanic) legal system.

Generally, judicial precedent has an legal-interpretative character in the continental legal system.

According to the accepted opinion, the legal norm reflected in the judicial precedent has an unwritten character, does not have a clear formulation, is often vague and complexly formulated. And the judge departs from the principles in order to discover the law that needs to be applied in the specific case.In such cases, judges do not create judicial precedents, but only apply the relevant principles.

Thus, loopholes in law as well as judicial discretion are excluded. In the article, we come to the conclusion that the literal method of interpretation of judicial precedent somewhat limits the right of discretion of judges, which may seem both positive and negative. It is positive in the sense that the judges cannot change or completely change the content and meaning of the law in their opinions.

Therefore, here, as everywhere, it is necessary to look for the "golden mean".

The author alsow concludes that one of the weak points of case law is the provision of retroactive effect of precedents. But in practice, many attempts have been made to take up this weakness and establish the further principle of operation of judicial precedent.

Аннотация

В данной статье автор подробно рассмотрел понятие, сущность, содержательные особенности судебного прецедента и судебной практики.

В статье также затрагивается вопрос судебного (судейского) усмотрения, поскольку в англо-американской правовой системе прецеденты образуются благодаря свободному усмотрению судей, что строго ограничено в континентальной (романо-германской) правовой системе.

Судебный прецедент в континентальной правовой системе носит, как правило, правовой-интерпретационный характер. Согласно общепринятому мнению, правовая норма, отраженная в судебном прецеденте, носит неписаный характер, не имеет четкой формулировки, зачастую расплывчата и сложно сформулирована. И судья отходит от принципов, чтобы обнаружить закон,который необходимо применить в конкретном случае. В таких случаях судьи не создают судебных прецедентов, а лишь применяют соответствующие принципы. Таким образом, лазейки в законе, а также судебное усмотрение исключены.В статье автор приходит к выводу, что буквальный метод толкования судебного прецедента несколько ограничивает право усмотрения судей, что может показаться как положительным, так и отрицательным. Оно положительно в том смысле, что судьи не могут изменить или полностью изменить содержание и смысл закона в своем мнении. Поэтому здесь, как и везде, необходимо искать «золотую середину».

В заключении отмечается, что одним из слабых сторон прецедентного права является положение об обратной силе прецедентов. Но на практике было предпринято множество попыток восполнить этот пробел и установить дальнейший принцип действия судебного прецедента.

Հիմնաբառեր՝ դատական նախադեպ, դատական հայեցողություն դատական պրակտիկա իրավական դիրքորոշում, դատական որոշում, իրավամեկնողական նախադեպ:

Ключевые слова: судебный прецедент, судебное усмотрение, судебная практика, правовая позиция, судебное решение, правовой-интерпретационный прецедент.

Key words: judicial precedent, judicial discretion, judicial practice, legal position, judicial decision, legal-interpretative precedent.

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ / CRIMINAL LAW / УГОЛОВНОЕ ПРАВО

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական

HARUTYUNYAN NAREK
PhD Student of the YSU Department of Criminal Law, Investigator of the 1-st Investigation Division of Kentron and Nork-Marash Administrative Districts of the Investigation Department of Yerevan City of the RA Investigative Committee, 3-rd Class Counselor

АРУТЮНЯН НАРЕК
Соискатель кафедры уголовного права ЕГУ, следователь 1-го следственного отдела административных районов Кентрон и Норк-Мараш следственного управления города Еревана Следственного комитета РА, советник 3-го класса

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ*

THE MOST DANGEROUS TYPES OF ORGANIZATION OF ILLEGAL MIGRATION ACCORDING TO THE CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA*

НАИБОЛЕЕ ОПАСНЫЕ ВИДЫ ОРГАНИЗАЦИИ НЕЗАКОННОЙ МИГРАЦИИ ПО УГОЛОВНОМУ КОДЕКСУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ*

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվել և վերլուծության են ենթարկվել անօրինական միգրացիայի կազմակերպման ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքների քրեաիրավական որակման հիմնախնդիրները:

Տվյալ համատեքստում, նախ, ընդգծվել է, որ քննարկվող հանցանքը խմբի կողմից նախնական համաձայնությամբ կատարելն առկա է այն դեպքերում, երբ՝ 1) հանցագործության օբյեկտիվ կողմի կամ դրա մի մասի իրականացմանը մասնակցում են առնվազն երկու կատարողներ և 2) նրանք տվյալ հանցանքը կատարելու մասին պայմանավորվում են նախապես՝ նախքան դրա օբյեկտիվ կողմի իրականացումն սկսելը: Այդ կապակցությամբ առաջարկվել է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 470-ի 3-րդ մասի 1-ին կետով՝ որպես անօրինական միգրացիայի կազմակերպումը ծանրացնող հանգամանք, նախատեսել տվյալ հանցանքը մի խումբ անձանց կողմից ինչպես նախնական համաձայնությամբ, այնպես էլ առանց դրա կատարելը:

Բացի այդ, շեշտվել է քրեական օրենսգրքի հիշատակված հոդվածը նոր՝ 4-րդ մասով լրացնելու անհրաժեշտությունը: Դրանում, մասնավորապես, առաջարկվել է նախատեսել անօրինական միգրացիայի կազմակերպման առավել ծանրացուցիչ հետևյալ հանգամանքները՝ 1) նշված հանցանքը հանցավոր կազմակերպության կողմից կատարելը և 2) նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանք:

Հոդվածում նաև հիմնավորվել է, որ առաջարկվող օրենսդրական փոփոխությունները կարող են նպաստել ՀՀ քրեական գործող օրենսդրության կատարելագործմանը և անօրինական միգրացիայի կազմակերպման դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

Annotation

The features of the criminal-legal qualification of aggravating and most aggravating circumstances of the organization of illegal migration are discussed and analyzed in the presented article.

In this context, it is emphasized that the mentioned crime is considered committed by a group of persons by prior conspiracy in cases where: 1) its objective side or part of it is committed by at least two persons and 2) they agree to commit this crime in advance - before starting of its objective side. In this regard, it is proposed in Paragraph 1 of Part 3 of Article 470 of the Criminal Code of the Republic of Armenia, as an aggravating circumstance for organization of illegal migration, provide for the commission of a crime by a group of persons, both by prior conspiracy and without it.

In addition, it is noted the need to supplement the mentioned article of the Criminal Code with a new one: the fourth part. It, in particular, proposes to provide for the following most aggravating circumstances for organization of illegal migration: 1) the commission of this crime by a criminal organization and 2) the same act, which through negligence resulted in the death of a person or another serious consequence.

This scientific article also substantiates that the proposed legislative changes can help to improve the current criminal legislation of the Republic of Armenia and increase the effectiveness of the fight against the organization of illegal migration.

Аннотация

В статье рассмотрены и проанализированы особенности уголовно-правовой квалификации отягчающих и наиболее отягчающих обстоятельств организации незаконной миграции.

В данном контексте подчеркивается, что исследуемое преступление считается совершенным группой лиц по предварительному сговору в тех случаях, когда: 1) его объективная сторона или ее часть совершается как минимум двумя исполнителями и 2) они договариваются о совершении данного преступления предварительно – до того, как начать совершение его объективной стороны. В этой связи предлагается в п. 1 ч. 3 ст. 470 УК РА в качестве отягчающего обстоятельства организации незаконной миграции предусмотреть совершение преступления группой лиц как по предварительному сговору, так и без него.

Кроме того, отмечается необходимость дополнения упомянутой статьи УК новой: четвертой частью. В ней, в частности, предлагается предусмотреть следующие наиболее отягчающие обстоятельства организации незаконной миграции: 1) совершение данного преступления преступной организацией и 2) то же деяние, повлекшее по неосторожности смерть человека или иное тяжкое последствие.

В статье также обосновывается, что предлагаемые законодательные изменения могут поспособствать совершенствованию действующего уголовного законодательства РА и повышению эффективности борьбы с организацией незаконной миграции.

Հիմնաբառեր՝ քրեական օրենսգիրք, հանցագործություն, անօրինական միգրացիա, անօրինական միգրացիայի կազմակերպում, ծանրացուցիչ հանգամանքներ:

Key words: Criminal Code, crime, illegal migration, organization of illegal migration, aggravating circumstances.

Ключевые слова: уголовный кодекс, преступление, незаконная миграция, организация незаконной миграции, отягчающие обстоятельства.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ / CRIMINAL PROCEDURE AND CRIMINALISTICS / УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС И КРИМИНАЛИСТИКА

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ՀՀ արդարադատության նախարարության «Թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

ABRAHAMYAN ANAHIT
Director of the «Translation Centre» SNCO of the Ministry of Justice of the Republic of Armenia

АБРААМЯН АНАИТ
Директор ГНКО Министерства юстиции Республики Армения «Центр переводов»

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՎԱՍՏԻ ԳԻՏԵԼԻՔԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ*

THE PRINCIPLE OF THE PRESUMPTION OF INNOCENCE FROM THE ASPECT OF RELIABLE AND PROBABLE KNOWLEDGE*

ПРИНЦИП ПРЕЗУМПЦИИ НЕВИНОВНОСТИ С ТОЧКИ ЗРЕНИЯ ДОСТОВЕРНОГО И ВЕРОЯТНОГО ЗНАНИЯ*

"To know what everyone knows is to know nothing. Knowledge begins with what people do not know." ***Remy de Gourmont***

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է քրեական վարույթներում անմեղության կանխավարկածի ուսումնասիրությանը՝ հավաստի և հավանական գիտելիքի տեսանկյունից: Այն առաջին հերթին տարբերակում է հավաստի գիտելիքը, երբ ճշմարտությունն անհերքելիորեն հաստատված է, հավանական գիտելիքից, որն ավելի պակաս հստակ է և դրա հաստատման համար անհրաժեշտ են լրացուցիչ ապացույցներ: Հեղինակը պնդում է, որ անմեղության կանխավարկածը, որը քրեադատավարական իրավունքի անկյունաքարն է, գործում է գիտելիքի այս շրջանակներում՝ ընդգծելով, որ անձը կարող է մեղավոր ճանաչվել միայն հավաստի ապացույցների հիման վրա:

Հոդվածն այնուհետև անդրադառնում է իրավաբան գիտնականների շրջանում առկա բանավեճերին՝ կապված քրեական վարույթի տարբեր փուլերում անմեղության կանխավարկածի մեկնաբանման և կիրառության հետ: Դրանում քննարկվում է, թե ինչպես է այս սկզբունքը հաճախ սխալ մեկնաբանվում կամ կիրառվում, մասնավորապես այն առումով, թե արդյոք այն կիրառելի է այն դեպքերում, երբ մեղադրյալը «հավանաբար մեղավոր է»՝ համաձայն քննությամբ ձեռք բերված ապացույցների:

Որպես եզրահանգում՝ հոդվածում արտահայտվում է այն կարծիքը, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը պահանջում է կասկածների մեկնաբանումն հօգուտ մեղադրյալի, որ մեղքի առկայության ապացուցման բեռը կրում է բացառապես մեղադրանքի կողմը, և որ դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են մանրակրկիտ քննություն իրականացնել ինչպես մեղադրյալի մեղավորության, այնպես էլ անմեղության առնչությամբ:

Առանցքային հարցերը, որոնց անդրադարձ է կատարվում հոդվածում, վերաբերում են անմեղության կանխավարկածի կիրառման ծավալին, այն հարցին, թե արդյոք այն առնչվում է միայն փաստերի հաստատմանը, թե ոչ, և արդյոք դրանով պետք է առաջնորդվել՝ դատավարական «կասկածները» փարատելու համար, ներառյալ՝ արարքների որակումը:

Annotation

The article explores the presumption of innocence in criminal proceedings through the lens of reliable and probable knowledge. It begins by distinguishing between knowledge considered reliable where truth is irrevocably established – and knowledge that is probable, which is less certain and requires further evidence to confirm its validity. The author argues that the presumption of innocence, a cornerstone of criminal procedure law, operates within this framework of knowledge, emphasizing that a person can only be declared guilty based on reliable evidence.

The article further delves into the debate among legal scholars about the interpretation and application of the presumption of innocence in various stages of criminal proceedings. It discusses how this principle is often misunderstood or misapplied, particularly regarding whether it implies that the accused should be considered “probably guilty” based on the evidence gathered during the investigation.

Key issues addressed include the extent to which the presumption of innocence should apply, whether it relates solely to the establishment of facts, and if it should cover procedural doubts, including the qualification of acts. The text also critiques the overly broad interpretation of the presumption of innocence that extends to treating the accused as innocent throughout the entire procedure, regardless of the evidence collected.

The article concludes that the presumption of innocence requires the interpretation of doubts in favor of the accused, mandates the burden of proof of guilt on the prosecution, and does not relieve procedural authorities from thoroughly investigating both the guilt and innocence of the accused. It also states that this presumption is applicable at all stages of the criminal process where the issue of guilt is being determined.

Аннотация

В статье рассматривается принцип презумпции невиновности в уголовном судопроизводстве с точки зрения достоверного и вероятного знания. В этой связи прежде всего дифференцируются достоверное знание, когда истина неопровержимо установлена, и вероятное знание, которое является менее точным и для его подтверждения необходимы дополнительные доказательства. Автор утверждает, что презумпция невиновности, которая является краеугольным камнем уголовно-процессуального права, действует в этих рамках знания, подчеркивая, что лицо может быть признано виновным только на основании достоверных доказательств.

Далее в статье рассматриваются дискуссии среди ученых-юристов, связанные с толкованием и применением презумпции невиновности на различных этапах уголовного процесса.В ней рассматривается, каким образом этот принцип часто неправильно истолковывается или применяется, в частности, с точки зрения того, применим ли он в случаях, когда обвиняемый, согласно собранным следствием доказательствам, "вероятно виновен". Рассматриваемые в статье ключевые вопросы касаются объема применения презумпции невиновности, вопроса о том, касается ли она только подтверждения фактов или нет, и следует ли руководствоваться ею, чтобы развеять процессуальные "сомнения", включая квалификацию деяний.

В статье, в качестве вывода, высказывается мнение о том, что принцип презумпции невиновности требует толкования сомнений в пользу обвиняемого, что бремя доказывания наличия вины лежит исключительно на стороне обвинения и, что процессуальные органы обязаны проводить тщательное расследование как относительно виновности, так и невиновности обвиняемого. В ней также отмечается, что принцип презумпции невиновности применим на всех этапах уголовного процесса, когда решается вопрос о виновности.

Հիմնաբառեր՝ անմեղության կանխավարկած, քրեական վարույթ, հավաստի և հավանական գիտելիք, ապացուցում:

Keywords: presumption of innocence, criminal proceeding, reliable and probable knowledge, proofing process.

Ключевые слова: презумпция невиновности; уголовное производство; достоверное и вероятное знание; процесс доказывания.

ԱԴՈՆՑ ԳՈՀԱՐ
ՀՀ Եվրոպական համալսարանի միջազգային հարաբերությունների և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, Հայ-Ռուսական համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

ADONTS GOHAR
Lecturer of the Faculty of international relations and law of the European University of Armenia, PhD Student of the Department of criminal law and criminal procedural law in Russian-Armenian University

АДОНЦ ГОАР
Преподаватель факультета международных отношений и права Европейского университета Армении, соискатель кафедры уголовного права и уголовно-процессуального права Российско-Армянского университета

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

THE FORMATION OF THE PRINCIPLE OF THE PRESUMPTION OF INNOCENCE IN INTERNATIONAL LEGAL REGULATIONS AND IN THE REPUBLIC OF ARMENIA*

ФОРМИРОВАНИЕ ПРИНЦИПА ПРЕЗУМПЦИИ НЕВИНОВНОСТИ В МЕЖДУНАРОДНЫХ ПРВОВЫХ РЕГУЛИРОВАНИЯХ И РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ*

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է անմեղության կանխավարկածի սկզբունքի ձևավորմանը միջազգային իրավական կարգավորումներում և ՀՀ օրենսդրության մեջ: Ուսումնասիրվել են իրավագիտության մեջ առկա՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի դերի վերաբերյալ մոտեցումները, վեր են հանել ընդհանուր սկզբունքների շարքում դրա տեղն ու դերը, բացահայտվել են տվյալ կանխավարկածի ձևավորման առանձնահատկություններն իրավունքի համակարգում:

Հոդվածում ներկայացվել են անմեղության կանխավարկածի ձևավորման փուլերը, ներպետական իրավունքում և միջազգային տարբեր փաստաթղթերում այդ սկզբունքի ամրագրումների առանձնահատկությունները և տարբերությունները, ինչպես նաև սկզբունքի ճյուղային պատկանելիության հարցի կապակցությամբ առաջացող քննարկումները: Եզրահանգումներ են կատարվել այն մասին, որ մինչ օրս քրեական դատավարության գիտության մեջ բավականաչափ ուսումնասիրված չեն անմեղության կանխավարկածի՝ քրեադատավարական այլ ինտիտուտների հետ հարաբերակցության հարցերը, օրինակ՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի համապատասխանությունը փաստերի իրավական կանխավարկածների կանոններին, սույն սկզբունքի իրականացման հարցերը ոչ արդարացնող հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելու կարգավորումների, ինչպես նաև համագործակցության վարույթի համատեքստում:

Անդրադառնալով քննարկվող սկզբունքի ձևավորման կարևորագույն տարրին՝ իրավական համակարգում դրա ճյուղային պատկանելիությանը, հոդվածում ներկայացվել են առաջարկություններ: Մասնավորապես՝ Սահմանադրության 66-րդ հոդվածով սահմանված «հանցագործության համար մեղադրվողը» բառակապակցությունը փոխարինել «հանրային իրավական պատասխանատվության ենթակա անձը» բառակապակցությամբ և այլն:

Annotation

The article is dedicated to the formation of the principle of presumption of innocence in international regulations and in the Armenian legislation. The article examines the approaches to the role of the principle of the presumption of innocence existing in jurisprudence, highlights its place and role among the general principles, reveals the peculiarities of the formation of the presumption of innocence in the legal system.

The article presents the stages of the formation of the presumption of innocence, the peculiarities of fixing the principle in domestic law and international documents, as well as the question of the branch affiliation of the principle. The article also concludes that the issues of correlation between the presumption of innocence and other criminal justice institutions have not been sufficiently studied in the science of criminal procedure even nowadays: for example, the compliance of the principle of the presumption of innocence with the rules of legal presumptions of facts, the issues of the implementation of this principle, the regulations for stopping criminal prosecution on unjustified grounds, as well as in the context of cooperation proceedings.

Referring to the most important element of the development of the discussed principle, its branch affiliation in the legal system, the author presented recommendations that would enable the above-mentioned principle to be directly applied in the framework of other public proceedings.

Аннотация

Статья посвящена изучению формирования принципа презумпции невиновности в международных правовых нормах и законодательстве РА. В этой связи рассматриваются существующие в юридической науке подходы к роли принципа презумпции невиновности, выделяется его место и роль среди общих принципов, раскрываются особенности формирования презумпции невиновности в правовой системе.

В статье представлены также этапы становления принципа презумпции невиновности, особенности его закрепления в отечественном праве и международных документах, а также вопрос отраслевой принадлежности данного принципа. В частности, делается вывод о том, что вопросы соотношения презумпции невиновности и других институтов уголовного правосудия на сегодняшний день недостаточно изучены в науке уголовного процесса: например, соответствие принципа презумпции невиновности нормам уголовного судопроизводства, правовые презумпции фактов, вопросы реализации этого принципа, правила прекращения уголовного преследования по неоправдательным основаниям, а также в рамках производства по сотрудничеству.

Относительно важнейшего элемента развития обсуждаемого принципа – его отраслевой принадлежности в правовой системе, в статье представлены рекомендации, которые позволят непосредственно применять указанный принцип в рамках иного публичного судопроизводства.

Հիմնաբառեր՝ անմեղության կանխավարկած, անմեղության կանխավարկածի սկզբունք, միջազգային իրավունք, ճյուղային սկզբունք, հանցագործության համար մեղադրվող:

Key words: presumption of innocence, principle of presumption of innocence, international law, branch principle, accused.

Ключевые слова: презумпция невиновности, принцип презумпции невиновности, международное право, отраслевой принцип, обвиняемый в совершении преступления.

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
Իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ քննչական կոմիտեի՝ Պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության պետ, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս

BAGHDASARYAN GEVORG
Candidate of Legal Sciences, Head of the General Department for Investigation of Crimes against the State, Fundamentals of the Constitutional Order and Public Security of the RA Investigative Committee, Lecturer at the Yerevan State University Chair of Criminal Procedure and Criminalistics

БАГДАСАРЯН ГЕВОРГ
Кандидат юридических наук, начальник Главного управления СК РА по расследованию преступлений против государства, основ конституционного строя и общественной безопасности, преподаватель кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ՝ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

SOME ISSUES OF ACCESS TO PRIVACY IN THE FRAMEWORK OF THE PUBLICITY PRINCIPLE OF CRIMINAL PROCEEDING*

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ДОСТУПА К ТАЙНЕ ЧАСТНОЙ ЖИЗНИ В КОНТЕКСТЕ ПРИНЦИПА ПУБЛИЧНОСТИ УГОЛОВНОГО ПРОИЗВОДСТВА*

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում են մարդու մասնավոր կյանքի գաղտնիքի մատչելիության գործնական հարցեր՝ քրեական դատավարության հանրայնության սկզբունքի համատեքստում: Հեղինակը ներկայացնում է նախ քրեական վարույթի հանրայնության սկզբունքի բովանդակությունն ու դրանից բխող հիմնական պահանջները, ապա մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի միջազգային իրավական չափանիշները, այն սահմանափակելու հնարավոր դեպքերն ու հիմքերը:

Ներկայացված չափանիշների համատեքստում հոդվածում վերլուծվում են միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ վարույթով գաղտնի քննչական գործողություններ կատարելու բացարձակ արգելքը, առգրավման որոշման հիման վրա առանձին դեպքերում որոնողական գործողություններ կատարելու սահմանափակումը, տուժողի և վկայի հաղորդակցության վերաբերյալ տեղեկատվության պահանջի սահմանափակումն ու դատարանում լռելու իրավունքն իրացնող վկայի և տուժողի ցուցմունքները հրապարակելու արգելքը:

Վերլուծության հիման վրա հեղինակը հանգում է հետևության, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այդ կարգավորումները չեն համապատասխանում հանրային և մասնավոր շահերի հավասարկշռման պահանջին և գերարժևորում են մասնավոր շահերը:

Հեղինակի կարծիքով օրենսդիրը, առանձին կոնկրետ դեպքում գրեթե անհնար դարձնելով մասնավոր կյանքի գաղտնիքի իրավունքը սահմանափակելը, անտեսել է հակակշիռ հանրային շահը և չի նախատեսել այնպիսի կարգավորումներ, որոնք թույլ կտային մի կողմից անհարկի չմիջամտել մասնավոր կյանքին, իսկ մյուս կողմից՝ չարգելափակել հանցագործության բացահայտման հնարավորությունը:

Annotation

The article discusses practical issues of access to the privacy within the framework of the criminal procedure publicity concept. Prior to discussing international legal standards of the right to respect for private life, potential cases, and grounds for its restriction, the author first discusses the substance of the concept of publicity of criminal proceeding and the fundamental requirements emerging from it.

In the context of the presented criteria, the article examines the absolute ban on conducting undercovered investigative actions within the framework of medium-gravity crime proceedings, the restriction on conducting searching actions in certain situations on the basis of a seizure orders, the restriction on requesting information regarding the victim's and witness's communication, and the ban on publishing the victim's and witness's testimony – who exercise the right to keep silent in court.

The author concludes from the study that these RA Code of Criminal Procedure articles overestimate personal interests and fail to strike a balance between public and personal interests. The author claims that the legislator disregarded the balancing public interest and failed to include provisions that would have allowed for both the avoidance of undue interference in private life and the preservation of the opportunity to solve a crime by making the limitation of the right to privacy practically impossible in a given situation.

Аннотация

В статье рассматриваются практические вопросы доступа к тайне частной жизни в контексте принципа публичности уголовного судопроизводства. Автор сначала раскрывает содержание принципа публичности уголовного производства и вытекающие из него основные требования, затем международно-правовые стандарты права на уважение частной жизни, возможные случаи и основания его ограничения.

В контексте представленных критериев в статье анализируется абсолютный запрет на проведение тайных следственных действий в рамках производства по делам о преступлениях средней тяжести, ограничение на проведение розыскных мероприятий в отдельных случаях на основании постановления о выемке, ограничение запроса информации о связи между потерпевшим и свидетелем и запрет на публикацию показаний свидетеля и потерпевшего, которые реализуют право хранить молчание в суде.

На основе анализа автор приходит к выводу, что рассматриваемые положения Уголовно-процессуального кодекса РА не соответствуют требованию сбалансированности общественных и личных интересов и переоценивают личные интересы. По мнению автора, законодатель, сделав ограничение права на тайну частной жизни практически невозможным в конкретном случае, проигнорировал уравновешивающий общественный интерес и не предусмотрел такие положения, которые позволили бы, с одной стороны, не вмешиваться без необходимости в частную жизнь, а с другой не блокировать возможность раскрытия преступления.

Հիմնաբառեր՝ հանրայնություն, հանրային շահ, մասնավոր շահ, անձնական կյանք, գաղտնի քննչական գործողություն, խուզարկություն, առգրավում, տեղեկատվության պահանջ, լռելու իրավունք, ցուցմունք հրապարակել:

Keywords: publicity, public interest, personal interest, private life, undercovered investigative actions, search, seizure, request for information, right to silence, publication of testimony.

Ключевые слова: публичность, общественный интерес, личный интерес, личная жизнь, тайное следственное действие, обыск, выемка, запрос информации, право хранить молчание, публикация показаний.

ԲԱՂԻՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ
Երևանի պետական համալսարանի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ

BAGHINYAN SUREN
PhD student of the Yerevan State University Criminal Procedure and Criminalistics Department

БАГИНЯН СУРЕН
Соискатель кафедры уголовного процесса и криминалистики Ереванского государственного университета

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱՎՈՐ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

CERTAIN FEATURES OF THE MECHANISM OF IMPLEMTENTATION OF HIGH TREASON*

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ ПРЕСТУПНОГО МЕХАНИЗМА ГОСУДАРСТВЕННОЙ ИЗМЕНЫ*

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է պետական դավաճանության հանցավոր մեխանիզմի դրսևորման քրեաիրավական հիմքի առանձնահատկությունների բացահայտմանը և ներկայացմանը: Ըստ այդմ, վերլուծվել է ՀՀ քրեական օրենսգրքի 418-րդ հոդվածը՝ համեմատելով ՌԴ քրեական օրենսգրքի 275-րդ հոդվածի հետ, ինչպես նաև մեջբերվել են տարբեր հեղինակների մոտեցումները պետական դավաճանության օբյեկտիվ կողմի վերաբերյալ և այլն:

Հետազոտության արդյունքում հեղինակը հանգում է եզրակացության, որ ավելի նպատակահարմար կլինի պետական դավաճանության հայեցակարգային բովանդակության մեջ ներառել միայն պետական գաղտնիքի բացահայտման այն դեպքերը, երբ համապատասխան սուբյեկտն իր ծառայության միջոցով տիրապետում է պետական գաղտնիքի կամ այն ինչ-որ կերպ վստահված է լինում նրան: Նշվում է նաև, որ պետական դավաճանության հանցակազմն ունի էական կատարելագործման կարիք:

Annotation

This scientific article is dedicated to the disclosure and presentation of the criminal-law features of the mechanism of the implementation act of high treason. Moreover, these are such features that are of key importance for revealing the criminological characteristics of crimes of this type and the various mechanisms of its manifestation. Accordingly, the disposition of Article 418 of the Criminal Code of the Republic of Armenia has been analyzed; it has been compared with Article 275 of the Criminal Code of the Russian Federation; the approaches of different authors regarding the objective side of the corpus delicti of high treason, the content of the concept of going over to the side of the enemy, etc. have been analyzed.

At the end of this Article, the author concludes that it would be more expedient to include in the conceptual content of high treason only those cases of disclosure of state secrets when the relevant subject is in possession of state secrets through his service, or is in some way entrusted with information of this nature. In accordance with this the crime of state treason certainly needs significant improvements.

Аннотация

Настоящая научная статья посвящена раскрытию и представлению специфики уголовно-правовых основ проявления преступного механизма государственной измены. Соответственно, анализируются диспозиция ст. 418 Уголовного кодекса РА, которая сопоставлена со ст. 275 Уголовного кодекса РФ, а также подходы разных авторов относительно вопроса объективной стороны состава преступления государственной измены, содержания понятия перехода на сторону врага и др.

В заключении представлены выводы автора, основанные на результатах проведенного иссле-дования. В частности, автор находит, что в концептуальное содержание государственной измены целесообразнее было бы включить исключительно те случаи разглашения государственной тайны, когда соответствующий субъект владеет государственной тайной по службе, либо каким-либо образом ему доверены сведения такого характера. В соответствии с этим отмечается, что состав государственной измены нуждается в существенном совершенствовании.

Հիմնաբառեր՝ պետական դավաճանություն, առանձնապես ծանր հանցագործություն, մեխանիզմ, պետական անվտանգություն, թշնամի, դիսպոզիցիա:

Key words: high treason, especially serious crime, mechanism, national security, enemy, particularly grave, disposition.

Ключевые слова: государственная измена, особо тяжкое преступление, механизм, государственная безопасность, враг, диспозиция.

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՍԵՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

MARTIROSYAN ARSEN
Candidate of Legal Sciences, Associate Professor

МАРТИРОСЯН АРСЕН
Кандидат юридических наук, доцент

ՔՆՆՉԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

FEATURES OF THE PROCEDURAL ORDER OF PRE-TRIAL INVESTIGATION CONDUCTED BY AN INVESTIGATIVE GROUP*

ОСОБЕННОСТИ ПРОЦЕССУАЛЬНОГО ПОРЯДКА ПРОИЗВОДСТВА ПРЕДВАРИТЕЛЬНОГО СЛЕДСТВИЯ СЛЕДСТВЕННОЙ ГРУППОЙ*

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է մինչդատական վարույթի ընդհանուր պայմաններից մեկին՝ քննչական խմբի կողմից նախաքննության կատարմանը: Հոդվածի արդիականությունը առաջին հերթին պայմանավորված է քննչական խմբի կողմից նախաքննության կատարման դեպքում գործնականում ի հայտ եկած մի շարք խնդիրներով: Նշվածի համատեքստում հոդվածի շրջանակներում, նախ՝ քննարկման առարկա է դարձվել քննչական խումբ ստեղծելու մասին որոշումը վարույթի մասնավոր մասնակիցներին ծանոթացնելու դատավարական կարգին և ժամկետներին, ապա՝ խմբի կազմը փոփոխելու և գործունեությունը դադարեցնելու դատավարական կարգին վերաբերող հարցերը:

Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա հեղինակի կողմից փաստվել է, որ օրենսդիրը հստակ չի կանոնակարգել ինչպես քննչական խումբ ստեղծելու մասին որոշումը վարույթի մասնավոր մասնակիցներին ծանոթացնելու դատավարական կարգը և ժամկետները, այնպես էլ խմբի կազմը փոփոխելու և դադարեցնելու՝ դատավարական կարգը, ինչով պայմանավորված՝ առաջարկվում է քրեադատավարական օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ կարգավորելով խնդրո առարկա հարցերը:

Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա հեղինակի կողմից փաստվել է, որ օրենսդիրը հստակ չի կանոնակարգել ինչպես քննչական խումբ ստեղծելու մասին որոշումը վարույթի մասնավոր մասնակիցներին ծանոթացնելու դատավարական կարգը և ժամկետները, այնպես էլ խմբի կազմը փոփոխելու և դադարեցնելու՝ դատավարական կարգը, ինչով պայմանավորված՝ առաջարկվում է քրեադատավարական օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ կարգավորելով խնդրո առարկա հարցերը:

Բացի դրանից, հոդվածի շրջանակներում առանձին քննարկման առարկա է դարձվել քննչական խմբի կողմից նախաքննություն կատարելու դեպքում խմբի անդամ քննիչների դատավարական ինքնուրույնությանը վերաբերող հարցերը:

Նշվածի համատեքստում հեղինակը կարծում է, որ ճիշտ կլինի, որպեսզի օրենսդիրը, ելնելով քննիչի դատավարական ինքնուրույնության երաշխավորման անհրաժեշտությունից, քննչական խմբի ղեկավարի հանձնարարությունների դեմ խմբի անդամ քննիչի կողմից հսկող դատախազին առարկություններ ներկայացնելու կառուցակարգեր նախատեսի:

Ամփոփելով՝ հեղինակը եզրակացնում է, որ հոդվածի շրջանակներում կատարված վերլուծությունները ու դրանց հիման վրա ներկայացվող առաջարկները կնպաստեն ինչպես քրեադատավարական օրենսդրության, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը, և հնարավոր այն դատավարական վեճերի բացառմանը, որոնք առաջանում են քննչական խմբի կողմից նախաքննության կատարման դեպքում:

Annotation

The article is dedicated to one of the common conditions of pretrial proceedings – the conduct of a preliminary investigation by an investigative group. The relevance of the article is primarily due to a range of issues that have practically arisen during the conduct of a preliminary investigation by an investigative group. In the context of the article, the subject of discussion first became the decision to create an investigative group to familiarize private participants with the procedural order and deadlines, followed by issues related to changes in the composition and suspension of the group's activities concerning procedural order.

Based on research and analysis, the author presents arguments that the legislation does not clearly regulate both the decision to familiarize private participants with the procedural order and deadlines, as well as the procedural order for the suspension and change of the group's composition. Therefore, the author suggests making corresponding amendments to the criminal procedure code, thereby regulating the issues that are the subject of this problem.

In addition, within the article, separate discussions focus on questions related to the procedural independence of investigative group members during the conduct of a preliminary investigation by an investigative group. In this context, the author deems it fair for the legislation, based on the necessity to guarantee the procedural independence of the investigator, to provide mechanisms for the investigative group member to object to the orders of the head of the investigative group, presenting objections to the supervising prosecutor.

Summing up the author concludes, that the analyses conducted in this article and the proposals based on them will undoubtedly contribute to the improvement of both criminal procedural legislation and law enforcement practice, eliminating possible procedural conflicts that arise during the conduct of a pre-trial investigation by an investigative group.

Аннотация

Статья посвящена одному из общих условий досудебного производства – предварительному следствию, осуществляемому следственной группой. Актуальность статьи прежде всего обусловлена рядом проблем, возникших на практике при производстве предварительного следствия следственной группой. В контексте упомянутого в рамках статьи предмета обсуждения, вначале анализируется принятие решения о создании следственной группы, затем вопросы изменения состава и приостановления деятельности группы, касающиеся процессуального порядка.

На основе исследования и анализа автором приводятся аргументы о том, что законодательство нечетко регламентирует как решение об ознакомлении частных участников производства процессуальному порядку и срокам, так и процессуальный порядок приостановления и изменения состава группы, в связи с чем предлагается внести соответствующие изменения и дополнения в Уголовно-процессуальный кодекс РА, регулируя тем самым вопросы, являющиеся предметом данной проблемы.

Кроме того в статье отдельно обсуждаются вопросы, относящиеся к процессуальной самостоятельности следователей – членов группы при производстве предварительного следствия следственной группой. В контексте упомянутого автор считает справедливым, чтобы законодательство, исходя из необходимости гарантии процессуальной самостоятельности следователя, предусмотрело механизмы представления возражений контролирующему прокурору следователем –членом группы против поручений руководителя следственной группы.

В заключении автор отмечает, что предложения, выдвинутые на основе анализа, проведенного в рамках статьи, безусловно будут способствовать улучшению как уголовно-процессуального законодательства, так и правоприменительной практики и исключению тех возможных процессуальных коллизий, которые возникают при производстве следственной группой предварительного следствия.

Հիմնաբառեր՝ նախաքննություն, վարույթի ծավալ, վարույթի բարդություն, քննչական խումբ, քննչական մարմնի ղեկավար, խմբի ղեկավար, խմբի անդամ քննիչ, բացարկ, քննչական խմբի կազմի փոփոխություն, քննչական խմբի գործունեության դադարում:

Keywords: pre-trial investigation, proceedings volume, proceedings complexity, investigative group, head of investigative body, group leader, investigator – group member, challenge, change of investigative group composition, suspension of investigative group activities.

Ключевые слова: предварительное следствие, объемы производства, сложность производства, следственная группа, руководитель следственного органа, руководитель группы, следователь - член группы, отвод, изменение состава следственной группы, приостановление деятельности следственной группы.



ՎԱՆՈՒՆԻ ՄԵՐԻ
Ստրասբուրգի Համալսարանի «Կիբերարդարադատություն» մագիստրոսական ծրագրի ուսանող

VANUNI MERI
Student of «Cyber Justice» Masters Program at the University of Strasburg

ВАНУНИ МЕРИ
Студент магистерской программы «Кибер юстиция» университета Страсбурга

ԱՆՁԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ*

GUARANTEES FOR THE PROTECTION OF INDIVIDUAL'S PROPERTY RIGHTS IN CRIMINAL PROCEEDINGS*

ГАРАНТИИ ЗАЩИТЫ ИМУЩЕСТВЕННЫХ ПРАВ ЛИЧНОСТИ В УГОЛОВНОМ ПРОИЗВОДСТВЕ*

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է քրեական վարույթի ընթացքում անձի սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքներին և ուսումնասիրում է քրեական վարույթի շրջանակներում անձի հիմնարար իրավունքի՝ սեփականության իրավունքի անխոչընդոտ իրացման հնարավորությունները և դրա վերաբերյալ արդի հիմնախնդիրները: Նշվածն իրենից ենթադրում է ոլորտը կարգավորող իրավական ակտերի և նշված իրավական ակտերի՝ տարբեր իրավահարաբերություններում կիրառման համակողմանի ուսումնասիրություն:

Ուսումնասիրելով կոնկրետ իրավիճակներ և դատական պրակտիկան՝ հեղինակը հոդվածում արտացոլում է գործող իրավական կարգավորումներում առկա անհամապատասխանություններն ու խնդիրները, որոնք կարող են հանգեցնել անձի սեփականության իրավունքի անհարկի սահմանափակման: Բացի դրանից, ընդգծվում է քրեական արդարադատության իրականացման և գույքային իրավունքների պաշտպանության հավասարակշռման կարևորությունը, որպեսզի դատական գործընթացները չհանգեցնեն անհարկի դժվարությունների վարույթի մասնակիցների համար: Անդրադարձ է կատարվում նաև համաչափության սկզբունքին՝ սեփականության իրավունքի սահմանափակման և դրա արդյունքում ակնկալվող նպատակների համատեքստում:

Ամփոփելով՝ հեղինակը հանդես է գալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավական կարգավորման լրամշակման հետ կապված առաջարկությամբ՝ ուղղված քրեական դատավարության մասնակիցների սեփականության իրավունքի պաշտպանությունը ամրապնդելուն: Միևնույն ժամանակ, առաջարկվում է կատարել օրենսդրական փոփոխություն՝ քրեական արդարադատության համատեքստում անձի գույքային իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության և արդարացի իրավական մոտեցումների ապահովման համար:

Annotation

The article is dedicated to the guarantees of protecting an individual's property rights within the criminal proceedings and examines the possibilities for the unimpeded realization of an individual's fundamental right to property, as well as contemporary issues related to this. This involves a comprehensive study of the legal acts regulating this area and the application of these legal acts in various legal relationships.

By examining specific situations and judicial practice, the article reflects the existing inconsistencies and problems in the current legal regulations that can lead to undue restriction of an individual's property rights.

The study emphasizes the importance of balancing the implementation of criminal justice with the protection of property rights to ensure that judicial processes do not lead to undue difficulties for the participants. Additionally, the principle of proportionality is considered in the context of property rights restrictions and the objectives expected from such restrictions.

Concluding the article the author provides recommendations related to the legal regulations stipulated by the Criminal Procedure Code of the Republic of Armenia, aimed at strengthening the protection of property rights of participants in criminal proceedings. It is also proposed to make amendments to ensure stronger protection of property rights and fair legal approaches within the context of criminal justice.

Аннотация

Статья посвящена гарантиям защиты права собственности лица в рамках уголовного производства и исследованию возможности беспрепятственной реализации основного права лица на собственность, а также современных проблем, связанных с этим. Это предполагает всестороннее изучение нормативных актов, регулирующих данную область, а также проблем применения этих актов в различных правовых отношениях.

Исследуя конкретные ситуации и судебную практику, автор выявляет существующие пробелы, несоответствия и проблемы в действующем правовом регулировании, которые могут привести к ненадлежащему ограничению права собственности лица. В работе подчеркивается также важность балансирования между осуществлением уголовного правосудия и защитой имущественных прав, чтобы судебные процессы не приводили к неоправданным трудностям для участников процесса. Кроме того, рассматривается принцип пропорциональности в контексте ограничения права собственности и целей, ожидаемых от этого ограничения.

В результате исследования автор делает заключение о необходимости усовершенствования правового регулирования, предусмотренного Уголовно-процессуальным кодексом РА, направленного на укрепление защиты права собственности участников уголовного процесса. В частности, предлагается внести законодательные изменения для обеспечения более прочной защиты имущественных прав и справедливого правового подхода в контексте уголовного правосудия.

Հիմնաբառեր՝ քրեական վարույթ, սեփականության իրավունք, պաշտպանության երաշխիք, համաչափության սկզբունք, համարժեքություն, դատական մատչելիություն:

Key words: criminal procedure, property right, guarantee of protection, principle of proportionality,equivalence, judicial accessibility.

Ключевые слова: уголовный процесс, право собственности, гарантия защиты, принцип соразмерности, эквивалентность, судебная доступность.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

ISSN 2579-2806

ԲԱՆԲԵՐ

Արդարադատության ակադեմիայի

BULLETIN

of Academy of Justice

ВЕСТНИК

Академии юстиции

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ SCIENTIFIC - PRACTICAL JOURNAL НАУЧНО - ПРАКТИЧЕСКИЙ ЖУРНАЛ

2024 3(13)

ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔ / PRIVATE LAW / ЧАСТНОЕ ПРАВО

ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
3-րդ կուրսի ուսանող

GYULAMIRYAN EDGAR
3rd Year Student of the Faculty of Law
of the Yerevan State University

ГЮЛАМИРЯН ЭДГАР
Студент 3-го курса Юридического факультета
Ереванского государственного университета

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ*

SOME PROBLEMS OF MINORS' INHERITANCE RIGHT*

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ НАСЛЕДСТВЕННОГО ПРАВА НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ*

Ամփոփագիր

Հոդվածը մանրամասն ուսումնասիրում է անչափահասների ժառանգական իրավունքի պաշտպանության հիմնախնդիրները՝ «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի և ՀՀ քաղաքացիական օրենսդրության համատեքստում: Ըստ կոնվենցիայի՝ երեխան, ֆիզիկական և մտավոր անհասունության պատճառով, կարիք ունի հատուկ իրավական պաշտպանության, ինչը ՀՀ օրենսդրությունն ապահովում է պարտադիր ժառանգության իրավունքով:

Հոդվածում շեշտվում են մի շարք հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են անչափահասների ժառանգական իրավունքների իրացումը: Հատուկ ուշադրություն է դարձվում ժառանգատուի պարտքերի մարումը կարգավորող դրույթների բացակայությանը, որոնք կարող են անչափահասների համար լրացուցիչ ֆինանսական բեռ դառնալ:

Հոդվածում հեղինակը նաև անդրադառնում է Ռուսաստանում հնարավոր օրենսդրական բարեփոխումներին, որոնց արդյունքում անչափահասներին թույլ կտան ինքնուրույն մասնակցել ժառանգության պայմանագրերում:

Հեղինակը կարևորում է նոտարների և խնամակալության ու հոգաբարձության մարմինների համագործակցության մեխանիզմի ներդրումը, որը հնարավորություն կտա բացահայտել և կանխել անչափահասների իրավունքների խախտումները ժառանգական գործերում: Առաջարկվում է օրենսդրական փոփոխությունների միջոցով ապահովել անչափահասների ժառանգական իրավունքների հատուկ պաշտպանություն, ինչպես նաև իրավական երաշխիքներ՝ նրանց ժառանգական պարտավորությունների բեռը նվազեցնելու համար:

Հոդվածում հեղինակը եզրահանգում է, որ անչափահասների ժառանգական իրավահարաբերություններում առկա են բազմաթիվ բացեր, որոնց կարգավորումը թույլ կտա ոչ միայն կանխել իրավունքի խախտումները, այլև ապահովել երեխաների լիարժեք իրավունքների իրացումը ժառանգության գործընթացում:

Annotation

The article thoroughly examines the issues concerning the protection of minors' inheritance rights in the context of the UN Convention on the Rights of the Child and Armenian civil legislation. According to the convention, due to physical and intellectual immaturity, children need special legal protection, which is ensured by Armenian legislation through the right to mandatory inheritance.

The article highlights several issues that hinder the realization of minors' inheritance rights, with particular attention to the absence of provisions regulating the settlement of the decedent's debts, which could impose an additional financial burden on minors. The author also discusses potential legislative reforms in Russia that would allow minors to independently participate in inheritance contracts.

The author emphasizes the need for a mechanism of cooperation between notaries and guardianship bodies, which would enable the identification and prevention of violations of minors' rights in inheritance matters. Legislative changes are proposed to provide special protection of minors' inheritance rights and legal guarantees to reduce their inheritance obligations.

The article concludes that there are numerous gaps in minors' inheritance legal relations, and addressing these issues will not only prevent rights violations but also ensure the full realization of children's rights in the inheritance process.

Аннотация

Статья подробно изучает проблемы защиты наследственных прав несовершеннолетних в контексте Конвенции о правах ребенка и армянского гражданского законодательства. Согласно Конвенции, дети, из-за своей физической и интеллектуальной незрелости, нуждаются в особой юридической защите, которая обеспечивается армянским законодательством через право обязательного наследования.

В статье подчеркиваются несколько проблем, препятствующих реализации наследственных прав несовершеннолетних, особенно отсутствие норм, регулирующих погашение долгов наследодателя, что может создать дополнительную финансовую нагрузку для несовершеннолетних. Автор также рассматривает возможные законодательные реформы в России, которые позволят несовершеннолетним самостоятельно участвовать в наследственных договорах.

Автор подчеркивает важность внедрения механизма сотрудничества между нотариусами и органами опеки, что позволит выявлять и предотвращать нарушения прав несовершеннолетних в наследственных делах. Предлагаются законодательные изменения, которые обеспечат особую защиту наследственных прав несовершеннолетних и юридические гарантии для снижения их наследственных обязательств.

Статья делает вывод, что в области наследственных правоотношений несовершеннолетних существуют многочисленные пробелы, решение которых позволит не только предотвратить нарушения прав, но и обеспечить полную реализацию прав детей в процессе наследования.

Հիմնաբառեր՝ Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա, անչափահասներ, իրավական պաշտպանություն, ժառանգություն, ժառանգական իրավունքներ, քաղաքացիական օրենսդրություն, պարտադիր բաժին, ընտանեկան օրենսդրություն:

Keywords: Convention on the rights of the child, minors, legal protection, inheritance, inheritance rights, civil legislation, compulsory share, family legislation.

Ключевые слова: Конвенция о правах ребенка, несовершеннолетние, правовая защита, наследство, наследственные права, гражданское законодательство, обязательная доля, семейное законодательство.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ / CRIMINAL PROCEDURE AND CRIMINALISTICS / УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС И КРИМИНАЛИСТИКА

ԱՍԼԻԿՅԱՆ ԱՆԻ
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրանտ
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի օգնական

ASLIKYAN ANI
Master's Program Student of the RA Public Administration Academy,
Assistant of the Judge of the RA Civil Court of Appeal

АСЛИКЯН АНИ
Магистрант Академии государственного управления РА,
помощник судьи Апелляционного гражданского суда РА

ՔՆՆԻՉԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

THE INVESTIGATOR IN RELATIONS WITH PUBLIC PARTICIPANTS OF CRIMINAL PROCEDURE*

СЛЕДОВАТЕЛЬ ВО ВЗАИМООТНОШЕНИЯХ С ПУБЛИЧНЫМИ УЧАСТНИКАМИ УГОЛОВНОГО ПРОИЗВОДСТВА*

Ամփոփագիր

Քրեական արդարադատության համակարգը Հայաստանում, ինչպես և շատ այլ ժողովրդավարական երկրներում, նախագծված է ներգրավելու բազմաթիվ մասնակիցների, որոնցից յուրաքանչյուրն ունի իր հստակ դերն ու պարտականությունները, որոնք նպաստում են արդարադատության գերագույն նպատակին: Արդարադատության արդյունավետ իրականացումը հիմնված է քրեական վարույթի մասնակիցների միջև ներդաշնակ փոխազդեցության վրա, որոնցից յուրաքանչյուրն ունի իր տեսակետն ու գործառույթը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը և քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում են այն հստակ շրջանակները, որոնցով գործում են հիշյալ մասնակիցները՝ նախանշելով նրանց իրավունքները, պարտականությունները և քրեական դատավարությունը առաջնորդող ընթացակարգերը: Այս իրավական դաշտը նպատակ ունի հավասարակշռել քրեական վարույթի մասնակիցների շահերը՝ ապահովելով արդարադատության իրագործման տեսանելիությունը:

Սույն հոդվածն ուղղված է Հայաստանի Հանրապետությունում քրեական վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունների հիմնահարցերի վերհանմանը և մեկնաբանմանը: Այս փոխազդեցությունների ըմբռնումը շատ կարևոր է գնահատելու համար, թե ինչպես է իրականացվում արդարադատությունը և ինչպես են յուրաքանչյուր կողմի իրավունքներն ու պարտականությունները հավասարակշռված հայրենական քրեադատավարական դաշտում:

Այն նպատակ ունի ընդգծել յուրաքանչյուր մասնակցի դերի կարևորությունը ու բացառիկությունը, ինչպես նաև այն ուղիները, որոնցով նրանց փոխազդեցությունները նպաստում են քրեական արդարադատության համակարգի ընդհանուր արդյունավետությանը:

Annotation

Judicial structures form the backbone of the justice system, serving as the mechanism through which societies seek to uphold the rule of law, ensure accountability, and protect individual rights.

The criminal justice system in Armenia, as in many democratic countries, is designed to involve multiple actors, each with distinct roles and responsibilities that contribute to the ultimate goal of justice. Effective administration of justice is based on harmonious interaction between participants in criminal proceedings, each of whom has his own point of view and function.

The Constitution of the Republic of Armenia and the Code of Criminal Procedure define the framework within which the aforementioned participants operate, outlining their rights, responsibilities and the procedures that guide criminal proceedings. This legal framework aims to balance the interests of the participants in criminal proceedings, ensuring the visibility of justice.

The article is aimed at raising issues of relations between public participants in criminal proceedings in the Republic of Armenia. Understanding these interactions is crucial to appreciate how justice is administered and how the rights and responsibilities of each party are balanced in the domestic criminal justice system. It aims to highlight the importance and uniqueness of the role of each participant, as well as the ways in which their interactions contribute to the overall effectiveness of the criminal justice system.

Аннотация

Судебные структуры составляют основу системы правосудия, служа механизмом, с помощью которого общества стремятся поддерживать верховенство закона, обеспечивать подотчетность и защищать права личности.

Система уголовного правосудия в Армении, как и во многих демократических странах, спроектирована таким образом, чтобы в ней участвовало множество субъектов, каждый из которых имеет разные роли и обязанности, которые способствуют достижению конечной цели правосудия. Эффективное отправление правосудия базируется на гармоничном взаимодействии участников уголовного процесса, каждый из которых имеет свою точку зрения и функцию.

Конституция Республики Армения и Уголовно-процессуальный кодекс определяют рамки деятельности вышеупомянутых участников, определяя их права, обязанности и порядок осуществления уголовного судопроизводства. Данная правовая база призвана сбалансировать интересы участников уголовного судопроизводства, обеспечить видимость правосудия.

Целью статьи является освещение вопросов взаимоотношений между общественными участниками уголовного судопроизводства в Республике Армения. Понимание этих взаимодействий имеет решающее значение для понимания того, как осуществляется правосудие и насколько права и обязанности каждой стороны сбалансированы во внутренней системе уголовного правосудия. Его цель – подчеркнуть важность и уникальность роли каждого участника, а также то, как их взаимодействие способствует общей эффективности системы уголовного правосудия.

Հիմնաբառեր՝ քրեական դատավարություն, քրեական վարույթ, քրեական վարույթի մասնակիցներ, մինչդատական վարույթ:

Keywords: criminal procedure, criminal proceedings, participants of criminal proceedings, pre-trial proceedings.

Ключевые слова: уголовный процесс, уголовное судопроизводство, участники уголовного процесса, досудебное производство.

ԲԱԲԱԽԱՆՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի «Քրեական արդարադատություն և փաստաբանություն» մագիստրոսական ծրագրի ուսանող

BABAKHANYAN ANAHIT
Student of Master's Programme in "Criminal Justice and Advocacy" of the Faculty of Law of the Yerevan State University

БАБАХАНЯН АНАИТ
Студент магистерской программы «Уголовное правосудие и адвокатура» Юридического факультета Ереванского государственного университета

ՔՆՆԻՉԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ*

PROCEDURAL INDEPENDENCE AND RESPONSIBILITY OF THE INVESTIGATOR*

ПРОЦЕССУАЛЬНАЯ САМОСТОЯТЕЛЬНОСТЬ И ОТВЕТСТВЕННОСТЬ СЛЕДОВАТЕЛЯ*

Ամփոփագիր

Հասարակական կյանքի բոլոր ոլորտների բնականոն զարգացման համար մեծ նշանակություն ունի իրավապահ մարմինների գործունեությունը՝ ուղղված հակաիրավական գործողությունների ժամանակին կանխարգելմանը, ենթադրյալ հանցանքի կապակցությամբ վարույթի արդյունավետ իրականացմանը: Այս համատեքստում հատկանշական է քննիչի կարգավիճակն ու դերը:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունմամբ նախաքննություն իրականացնելու բացառիկ իրավասությունը վերապահվեց քննիչին: Այսպիսի կարգավորման նախատեսումը նախադրյալ էր քննիչի, ինչպես և վարույթի հանրային այլ մասնակիցների դատավարական ինքնուրույնության և դրա իրականացումն ապահովող երաշխիքների ամրագրման համար: Այս պայմաններում, քննիչի դատավարական ինքնուրույնության հարցը չի կորցրել իր արդիականությունը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ գործնականում քննիչի դատավարական ինքնուրույնության դրսևորումը ուղեկցվում է բազմաթիվ խնդիրներով:

Սույն աշխատանքով անդրադարձ է կատարվում քննիչի դատավարական ինքնուրույնության էությանը, դրա դրսևորման սահմանափակումներին, դատավարական ինքնուրույնության շրջանակներում քննիչի և վարույթի հանրային այլ մասնակիցների փոխհարաբերություններին՝ վեր հանելով մի շարք գործնական խնդիրներ և օրենսդրական բացեր, որոնց կարգավորման նպատակով ներկայացվել են օրենսդրական առաջարկություններ:

Աշխատանքով հիմնավորվել է այն մոտեցումը, որ օրենսդիրը որոշ դեպքերում կտրուկ է արձագանքել քննիչի դատավարական ինքնուրույնությանը և նախատեսել էական սահմանափակումներ: Որպես նախաքննություն իրականացնելու լիազորություններով օժտված իրավասու պաշտոնատար անձ՝ քննիչն իր որոշումներում և դատավարական գործողություններում պետք է լինի ինքնուրույն:

Annotation

For the sustainable development of the public life, the role of law enforcement agencies is crucial. Their primary focus is on the timely prevention of illegal activities and the effective management of criminal cases. In this framework, the status and responsibilities of investigators are particularly significant.

With the enactment of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia, investigators have been granted the exclusive right to conduct investigations. This legislative change has been pivotal for enhancing the procedural independence of investigators and other participants in the criminal process and for the establishment of the norms that guarantee realization. However, the question of procedural independence of investigators still remains pertinent, as practical challenges often hinder its realization.

This paper delves into the essence of procedural independence of investigators, into the limitations of its manifestation and also into the interrelationships between investigators and other public participants in the criminal process, within the procedural independence, bringing to light a range of practical problems and legislative shortcomings and coming up with amendments to address these issues.

The analysis underscores that in several instances, legislators have responded sharply to the procedural independence of investigators by imposing significant restrictions. As competent officials tasked with investigations, it is essential for investigators to be independent while making decisions and performing judicial actions.

Аннотация

Для устойчивого развития всех сфер общественной жизни деятельность правоохранительных органов имеет первостепенное значение. Она направлена на своевременное предупреждение противоправных действий и эффективное осуществление уголовных дел, связанных с предполагаемыми преступлениями. В этом контексте важную роль играет статус и ответственность следователя.

С принятием нового Уголовно-процессуального кодекса Республики Армения за следователем закреплено исключительное право на производство предварительного следствия. Эти нововведения стали необходимым условием для обеспечения процессуальной самостоятельности следователя, а также других публичных участников уголовного процесса. Закрепление таких норм направлено на создание гарантий, способствующих реализации этой независимости. В этих обстоятельствах вопрос о судебной самостоятельности следователя остается актуальным, поскольку на практике проявление этой самостоятельности сталкивается с множеством проблем.

В данной работе рассматривается природа судебной самостоятельности следователя, а также ограничения, с которыми он сталкивается в процессе своей деятельности. Особое внимание уделяется взаимоотношениям следователя с другими публичными участниками уголовного процесса в контексте самостоятельности судебной власти. В данной работе акцентируется внимание на практических и законодательных пробелах, касающихся судебной самостоятельности следователя. Представлены законодательные предложения с целью решения проблем в данной сфере.

В данной работе обоснован подход, согласно которому законодатель в ряде случаев проявлял резкую реакцию на процессуальную самостоятельность следователя, вводя значительные ограничения. Следователь, как компетентное должностное лицо, наделенное полномочиями по производству предварительного следствия, должен обладать самостоятельностью в своих решениях и судебных действиях.

Հիմնաբառեր՝ քննիչ, քննիչի դատավարական ինքնուրույնություն, քննչական մարմնի ղեկավար, հսկող դատախազ, քննչական խումբ, նախաքննություն, քրեական հետապնդում:

Keywords: investigator, procedural independence of investigator, head of investigative body, supervising prosecutor, investigative group, investigation, criminal prosecution.

Ключевые слова: следователь, процессуальная самостоятельность следователя, руководитель следственного органа, надзирающий прокурор, следственная группа, предварительное следствие, уголовное преследование.

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷՄԻԼ
Հայ-ռուսական համալսարանի Իրավունքի ինստիտուտի «իրավագիտություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանող

KHACHATRYAN EMIL
4th year student of the Law Department of the Institute of Law of the Russian-Armenian (Slavonic) University

ХАЧАТРЯН ЭМИЛЬ
Студент 4-го курса направления "Юриспруденция" Института права Российско-армянского университета

ՔՆՆԻՉԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ*

RELATIVE INDEPENDENCE OF THE INVESTIGATOR AS A GUARANTEE OF FUNCTIONAL INTEGRITY*

ОТНОСИТЕЛЬНАЯ САМОСТОЯТЕЛЬНОСТЬ СЛЕДОВАТЕЛЯ КАК ГАРАНТИЯ ФУНКЦИОНАЛЬНОЙ НЕПРИКОСНОВЕННОСТИ*

Ամփոփագիր

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության համակարգում քննիչի գործառնական անձեռնմխելիությունը հանդիսանում է գործի արդյունավետ քննության և իրավակարգի ապահովման կարևոր բաղադրիչներից մեկը:

Քննիչի հարաբերական ինքնուրույնությունն՝ իր գործառույթների իրականացման ընթացքում, իհարկե, որոշակի սահմանափակումներով, անհրաժեշտություն է, որպեսզի ապահովվի քրեական դատավարության օրինականությունն ու արդյունավետությունը: Սույն աշխատության նպատակն է վերլուծել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քննիչի իրավական կարգավիճակը՝ որպես դատավարական սուբյեկտ, և գործառնական անձեռնմխելիության ապահովման հիմնարար հարցերը՝ հաշվի առնելով ինչպես ազգային, այնպես էլ միջազգային իրավական համակարգերի փորձը: Ուսումնասիրությունը կատարվել է քննիչի իրավասությունների շրջանակի, դատախազական ու գերատեսչական վերահսկողության դերի, ինչպես նաև քննիչ-դատախազ փոխհարաբերությունները կարգավորող իրավական նորմերի համատեքստում: Միաժամանակ, կներկայացվի նաև միջազգային փորձը՝ որպես համեմատական վերլուծության հիմք՝ հասկանալու համար, թե տարբեր երկրներում ինչպիսինն է քննիչի դերը և ինչպիսի սահմաններում է դրսևորվում նրա անկախությունը: Այնպիսի իրավական համակարգերում, որտեղ քննիչը գործում է հարաբերական ինքնուրույնության պայմաններում, նրա գործառնական անձեռնմխելիությունը պետք է երաշխավորվի օրենքով, ինչը հիմնաքարային նշանակություն ունի քրեական դատավարության պատշաճ կարգի և հանրային վստահության ապահովման համար:

Այսպիսով՝ աշխատությունը համադրում է ՀՀ օրենսդրական կարգավորումների, միջազգային փորձի և դատական նախադեպերի վերլուծությունը՝ փորձելով բացահայտել, թե ինչպես են դրանք համակցության մեջ ապահովում քրեական դատավարության արդարության սկզբունքների պահպանությունը:

Annotation

In the criminal procedure system of the Republic of Armenia, the operational immunity of an investigator is one of the important components of the effective investigation of a case and ensuring law and order. The relative independence of the investigator in the performance of his functions, of course, with certain limitations, is necessary to ensure the legality and effectiveness of criminal proceedings. The purpose of this study is to analyze the legal status of the investigator in accordance with the legislation of the Republic of Armenia as a procedural subject, and fundamental issues of ensuring operational immunity, taking into account the experience of both national and international legal systems. The study was conducted in the context of the investigator's competence, the role of prosecutorial and departmental supervision, as well as the legal norms governing the investigator-prosecutor relationship. At the same time, international experience will also be presented as a basis for comparative analysis in order to understand what the role of the investigator is in different countries and to what extent his independence is manifested. In such legal systems, where an investigator acts in conditions of relative independence, his operational immunity must be guaranteed by law, which is fundamental to ensuring the proper order of criminal proceedings and public trust. Thus, the work combines an analysis of the legislative norms of the Republic of Armenia, international experience and judicial precedents in order to identify how they collectively ensure compliance with the principles of fairness of criminal proceedings.

Аннотация

В уголовно-процессуальной системе Республики Армения оперативный иммунитет следователя является одним из важных компонентов эффективного расследования дела и обеспечения правопорядка. Относительная самостоятельность следователя при выполнении своих функций, конечно, с определенными ограничениями, является необходимостью для обеспечения законности и эффективности уголовного судопроизводства. Целью настоящей работы является анализ правового статуса следователя в соответствии с законодательством Республики Армения как процессуального субъекта, и фундаментальные вопросы обеспечения оперативного иммунитета с учетом опыта как национальных, так и международных правовых систем. Исследование проводилось в контексте компетенции следователя, роли прокурорского и ведомственного надзора, а также правовых норм, регулирующих отношения следователь прокурор. В то же время международный опыт также будет представлен в качестве основы для сравнительного анализа, что бы понять, какова роль следователя в разных странах и в каких пределах проявляется его независимость. В таких правовых системах, как, там, где следователь действует в условиях относительной независимости, его оперативный иммунитет должен быть гарантирован законом, что имеет основополагающее значение для обеспечения надлежащего порядка уголовного судопроизводства и общественного доверия.

Таким образом, в работе сочетается анализ законодательных норм РА, международного опыта и судебных прецедентов с целью выявления того, как они в совокупности обеспечивают соблюдение принципов справедливости уголовного судопроизводства.

Հիմնաբառեր՝ գործառնական անձեռնմխելիություն, հարաբերական ինքնուրույնություն, դատախազական հսկողություն, գերատեսչական հսկողություն, մինչդատական վարույթ, ինստիտուտ, լիազորություն, գործառույթ:

Keywords: operational immunity, relative independence, prosecutorial supervision, departmental supervision, pre-trial proceedings, institution, power, function.

Ключевые слова: функциональная неприкосновенность, относительная независимость, прокурорский надзор, ведомственный надзор, досудебное производство, институт, полномочия, функции.

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ
Հայաստանում ֆրանսիական համալսարանի իրավաբանության բակալավրի երրորդ կուրսի ուսանող

KHACHATRYAN MARIAM
A third-year Bachelor of Law student at the French University in Armenia

ХАЧАТРЯН МАРИАМ
Студент третьего курса бакалавриата юридического факультета Французского университета в Армении

ՔՆՆԻՉԻ ԴԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ*

THE ROLE OF INVESTIGATOR IN THE MODERN LEGAL SYSTEM*

РОЛЬ СЛЕДОВАТЕЛЯ В СОВРЕМЕННОЙ ПРАВОВОЙ СИСТЕМЕ*

Ամփոփագիր

Ժամանակակից հասարակությունում անվտանգության ապահովումը պահանջում է ոչ միայն իրավապահ մարմինների արդյունավետ աշխատանք, այլև հասարակության և պետության միջև հստակ և համակարգված համագործակցություն: Այս գործընթացը պահանջում է համտեղ ջանքեր և ինտեգրված մոտեցում՝ հասնելու շոշափելի և կայուն արդյունքների, և քննիչի դերի առանցքային նշանակությունը այս գործընթացքում ակնհայտ է, քանի որ վերջինս պատասխանատու է նախաքննության ընթացքի և արդյունքի համար:

Սույն հոդվածի նպատակն է առավել խորն ուսումնասիրել քննիչի դերի կարևորությունը իրավական համակարգում՝ անդրադառնալով նաև այնպիսի հիմնարար ասպեկտների, ինչպիսիք են «քննիչ-հասարակություն» հարաբերությունները: Այս հարաբերությունները ոչ միայն պայմանավորում են հասարակության վստահության մակարդակը իրավական համակարգի նկատմամբ, այլև նպաստում են հանցագործությունների կանխարգելմանը՝ ստեղծելով հասարակական ներգրավվածության և համագործակցության միջավայր:

Հոդվածում ներկայացվում է նաև քննիչի ինստիտուտի առանձնահատկությունների և վերջինիս ֆունկցիաներից բխող լիազորությունների վերլուծությունը: Քննիչի լիազորությունները ներառում են ինչպես քրեական գործերի քննության իրավական մեխանիզմների կիրառումը, այնպես էլ հասարակության հետ համագործակցության հմտությունների զարգացումը: Հատկապես կարևորվում է վստահության գործոնը, քանի որ առանց փոխադարձ համագործակցության անհար է ստեղծել իրավական համակարգի ամբողջականություն:

Այսպիսով, հոդվածը նպատակ ունի ընդգծել քննիչի դերի բազմաշերտությունը՝ շեշտադրելով նրա առանցքային նշանակությունը ինչպես իրավական գործընթացներում, այնպես էլ հասարակության վստահության ձևավորման գործում:

Annotation

In modern society, ensuring public safety requires not only the effective work of law enforcement agencies but also clear and systematic cooperation between society and the state. This process demands joint efforts and an integrated approach to achieve tangible and sustainable results, with the key importance of the investigator's role in this process being evident, as they are responsible for the course and outcome of the pre-trial investigation.

The aim of this article is to explore in-depth the importance of the investigator's role within the legal system, while also addressing fundamental aspects such as the "investigator-society" relationship. These relationships not only determine the level of public trust in the legal system but also contribute to the prevention of crime by creating an environment for public involvement and cooperation.

The article also presents an analysis of the features of the investigator institution and the powers derived from its functions. The investigator's powers include the application of legal mechanisms for investigating criminal cases as well as the development of skills for cooperation with society. The factor of trust is especially important, as without mutual cooperation, it is impossible to create the integrity of the legal system.

Thus, the article aims to highlight the multifaceted role of the investigator, emphasizing its significance not only in legal processes but also in the formation of public trust.

Аннотация

В современном обществе обеспечение общественной безопасности требует не только эффективной работы правоохранительных органов, но и четкого и системного сотрудничества между обществом и государством. Этот процесс требует совместных усилий и интегрированного подхода для достижения ощутимых и устойчивых результатов, и ключевое значение роли следователя в этом процессе очевидно, так как он несет ответственность за ход и результат досудебного расследования.

Целью данной статьи является более глубокое изучение важности роли следователя в правовой системе, а также рассмотрение таких фундаментальных аспектов, как «следователь-общество» отношения. Эти отношения не только определяют уровень доверия общества к правовой системе, но и способствуют предупреждению преступлений, создавая среду для общественного вовлечения и сотрудничества.

В статье также представлен анализ особенностей института следователя и полномочий, вытекающих из его функций. Полномочия следователя включают применение юридических механизмов расследования уголовных дел, а также развитие навыков сотрудничества с обществом. Особенно важен фактор доверия, так как без взаимного сотрудничества невозможно создать целостность правовой системы.

Таким образом, статья направлена на подчеркивание многогранной роли следователя, акцентируя внимание на его значимости не только в правовых процессах, но и в формировании общественного доверия.

Հիմնաբառեր՝ քննիչ, քննիչի դերի վերաիմաստավորում, գործառույթ, լիազորություն, վստահության գործոն, իրավական համակարգ, նախաքննություն, քրեական արդարադատություն:

Keywords: investigator, redefinition of the investigator's role, function, authority, trust factor, legal system, investigation, criminal justice.

Ключевые слова: следователь, переосмысление роли следователя, функция, полномочия, фактор доверия, правовая система, расследование, уголовное правосудие.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԳԵԼԻՆԱ
ՀՀ ՆԳՆ Կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանող, ոստիկանության ավագ սերժանտ

HOVHANNISYAN ANGELINA
4th year Student of the Full-time Education of the Faculty of Law of the Academy of the Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, Senior Sergeant of Police

ОВАННИСЯН АНГЕЛИНА
Студент 4-го курса очного обучения юридического факультета Академии образовательного комплекса МВД РА, старший сержант полиции

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ*

THE ROLE OF THE INVESTIGATIVE COMMITTEE OF THE RA IN ENSURING OF PUBLIC SECURITY*

РОЛЬ СЛЕДСТВЕННОГО КОМИТЕТА РА В ДЕЛЕ ОБЕСПЕЧЕНИЯ ОБЩЕСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ*

Ամփոփագիր

Գլոբալիզացիայի պայմաններում հասարակական անվտանգության և ժողովրդավարության առկա հակասությունները սրվում են. երևան են գալիս նոր մարտահրավերներ՝ պահանջելով վերաիմաստավորել հասարակական անվտանգության պարադիգմը, դիտարկել վերոնշյալ ինստիտուտի ապահովման գործում պատկան մարմինների ֆունկցիոնալությունը և, առհասարակ, դոկտրինալ ուսումնասիրության ենթարկել այդ ոլորտը, որ մշտապես զգոնության անհրաժեշտություն է թելադրում, մասնավորապես, իրավապահ մարմիններին:

Ի թիվս վերոնշյալ մարմինների՝ Հայաստանի Հանրապետության Քննչական կոմիտեն, անտարակույս, գործում է ըստ պատշաճի՝ հասարակությանը տալու համար անվտանգության ապահովման և պաշտպանվածության զգացում, ինչը, հարկ է խոստովանել, Կոմիտեին հաջողվում է:

Եվ այսպես, սույն հոդվածում ներամփոփ ներկայացված է Հայաստանի Հանրապետության Քննչական կոմիտեի դերը հասարակական անվտանգության ապահովման գործում՝ որպես մեր երկրում օրինականության ամրապնդման, հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ անխոնջ պայքարի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում անգնահատելի ներդրում ունեցող, գուցեև բավականին երիտասարդ, սակայն հաստատուն կերպով իր գոյության 2-րդ տասնամյակ թևակոխող ամրակոփ կառույց:

Ներկայացված հոդվածում լուսաբանվում է քննչական կոմիտեի (քննիչի) կանխարգելիչ գործունեությունը՝ որպես այդ մարմնի գործունեության ինքնուրույն ուղղություն, որի ընթացքում քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ կանխարգելիչ ազդեցությունը կոչված է նպաստելու նախաքննության խնդիրների լուծմանը:

Annotation

In the conditions of globalization, the contradictions between public security and democracy are intensifying. New challenges appear, demanding to rethink the paradigm of public security, to consider the functionality of the relevant bodies in ensuring the aforementioned institution and, in general, to subject this field to a doctrinal study, which constantly dictates the need for vigilance, in particular, to law enforcement agencies.

Among the above-mentioned bodies, the Investigative Committee of the Republic of Armenia, without a doubt, acts appropriately to give the society a sense of security and protection, which, it must be admitted, the Committee succeeds in.

And so, this article summarizes the role of the Investigative Committee of the Republic of Armenia in ensuring public security, as an invaluable contributor to the strengthening of legality, ensuring public security, tireless fight against crime, protecting the rights and freedoms of citizens in our country. Perhaps quite young, but steadily, the reinforced structure enters the 2nd decade of its existence.

The presented article examines the preventive activities of the Investigative Committee (investigator) as an independent direction, during which the preventive effect on participants in criminal proceedings is designed to help solve the problems of the preliminary investigation.

Аннотация

В условиях глобализации обостряются противоречия между общественной безопасностью и демократией. Появляются новые вызовы, требующие переосмысления парадигмы общественной безопасности, рассмотрения функциональности соответствующих органов по обеспечению упомянутого института и в целом подвергания этой области доктринальному исследованию, что постоянно диктует необходимость бдительности, в частности, в правоохранительные органы.

Среди вышеупомянутых органов Следственный комитет Республики Армения, вне всякого сомнения, действует как следует, чтобы дать обществу чувство безопасности и защищенности, что, надо признать, комитету удается.

Итак, в данной статье подытожена роль Следственного комитета Республики Армения в обеспечении общественной безопасности, как неоценимого вкладчика в укрепление законности, обеспечение общественной безопасности, неустанную борьбу с преступностью, защиту прав и свобод граждан в нашей стране, пожалуй, вполне молодая, но устойчиво укрепленная структура, вступающая во 2-е десятилетие своего существования.

В представленной статье рассматривается превентивная деятельность Следственного комитета (следователя) как самостоятельное направление, в ходе которого превентивное воздействие на участников уголовного судопроизводства призвано способствовать решению проблем предварительного следствия.

Հիմնաբառեր՝ ՀՀ քննչական կոմիտե, հասարակական անվտանգություն, հանցավորության պրոֆիլակտիկա, պրոֆիլակտիկ գործունեություն, քննության հակազդում, հանցավորության դեմ պայքար:

Keywords: Investigative Committee of the RA, public safety, crime prevention, preventive activities, counteraction to investigation, fight against crime.

Ключевые слова: Следственный комитет РА, общественная безопасность, профилактика преступности, профилактическая деятельность, противодействие расследованию, борьба с преступностью.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ, դասախոս, ՀՀ փաստաբանների պալատի անդամ

HOVHANNISYAN LUSINE
Ph.D Student, Lecturer of the YSU Department of Criminal Procedure and Criminalistics, member of the Chamber of Advocates of the RA

ОВАННИСЯН ЛУСИНЕ
Аспирант, преподаватель кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ, член Палаты адвокатов Республики Армения

ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ԵՎ ՆՈՐ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐԻ ՓՈՒԼՈՒՄ*

ISSUES OF CLARIFICATION OF THE ACCUSATION AND PRESENTATION OF NEW EVIDENCE AT THE PRELIMINARY HEARINGS STAGE*

ВОПРОСЫ РАЗЪЯСНЕНИЯ ОБВИНЕНИЯ И ПРЕДСТАВЛЕНИЯ НОВЫХ ДОКАЗАТЕЛЬСТВ НА СТАДИИ ПРЕДВАРИТЕЛЬНЫХ СЛУШАНИЙ*

Ամփոփագիր

Սույն հոդվածի քննարկման առարկան է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության համակարգում նախնական դատալսումների դերը և նշանակությունը՝ ընդգծելով դրանց կարևորությունը արդար դատական քննության և դատավարության արդյունավետության ապահովման համար: Կենտրոնական դեր ունեն երկու հիմնական խնդիրները՝ պաշտպանության կողմի իրավունքը ունենալ պարզաբանված մեղադրանք, ինչպես նաև ապացույցների թույլատրելիության վիճարկման և նոր ապացույցների ներկայացման դատավարական երաշխիքները: Հոդվածում հիմնավորվում է մեղադրյալի իրավունքների և հիմնարար ազատությունների արդյունավետ պաշտպանության իրականացումը հնարավոր դարձնող իրավական կարգավորումների հստակեցումը, որը հնարավորություն կընձեռի նախնական դատալսումների փուլում արդեն իսկ ունենալ պարզաբանված մեղադրանք և կերաշխավորի պաշտպանության կողմի գործնական մասնակցությունը ապացուցման գործընթացին: Նշվածը, իր հերթին, թույլ կտա բացառել իրավական անորոշությունը՝ ապահովելով ավելի թափանցիկ և կանխատեսելի դատավարության ընթացք, ինչը կնպաստի քրեական գործերի արդար և օբյեկտիվ քննությանը: Ընդորում, առանձին կարևորություն ունի այն հանգամանքը, որ, ըստ էության, նախնական դատալսումները ՀՀ քրեական դատավարության համակարգում հանդես են գալիս որպես պաշտպանության կողմի և հանրային մեղադրողի հանդիպման «առաջին հարթակ»: Նկատի ունենալով մինչդատական վարույթի ոչ լրիվ մրցակցային բնույթը, թե՛ պարզաբանված մեղադրանք ունենալը, թե՛ նոր ապացույցների ներկայացման հնարավորության առկայությունը դառնում են հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման կարևոր գործիք:

Annotation

This article examines the role and significance of preliminary hearings in the criminal justice system of the Republic of Armenia, emphasizing their importance in ensuring fair trials and the efficiency of the proceedings. Two main issues are highlighted: the right of the Defense to have clarified accusation and the procedural guarantees for contesting the admissibility of evidence and presenting new evidence. The article substantiates the need to clarify the legal regulations that enable the effective protection of the rights and fundamental freedoms of the Accused, which would allow clarified accusation to be presented at the preliminary hearing stage and ensure the practical involvement of the Defense in the evidentiary process. This, in turn, would eliminate legal uncertainty, leading to a more transparent and predictable course of proceedings, thereby contributing to fair and objective examination of criminal cases. Moreover, particular importance is attached to the fact that preliminary hearings essentially serve as the "first platform" for the meeting between the defense and the public prosecutor within the criminal procedure system of the Republic of Armenia. Considering the partially non-adversarial nature of the pretrial proceedings, both the existence of clarified charges and the opportunity to present new evidence become important tools for balancing public and private interests.

Аннотация

В данной статье обсуждается роль и значение предварительных слушаний в системе уголовного судопроизводства Республики Армения, с акцентом на их важность для обеспечения справедливого судебного разбирательства и эффективности судебного процесса. Центральное место занимают две основные проблемы: право защиты на разъяснение обвинения, а также процессуальные гарантии оспаривания допустимости доказательств и представления новых доказательств. В статье обосновывается необходимость уточнения правовых норм, обеспечивающих эффективную защиту прав и основных свобод обвиняемого, что позволит уже на этапе предварительных слушаний иметь разъясненное обвинение и обеспечит практическое участие стороны защиты в процессе доказывания. Это, в свою очередь, позволит исключить правовую неопределенность, обеспечивая более прозрачное и предсказуемое течение судебного процесса, что будет способствовать справедливому и объективному рассмотрению уголовных дел. Более того, особую важность имеет тот факт, что предварительные слушания по своей сути выступают в качестве «первой платформы» для встречи стороны защиты и государственного обвинителя в системе уголовного судопроизводства Республики Армения. Учитывая частично несостязательный характер досудебного производства, как наличие уточнённого обвинения, так и возможность представления новых доказательств становятся важными инструментами для балансировки публичных и частных интересов.

Հիմնաբառեր՝ նախնական դատալսումներ, մեղադրանք, ապացույցների թույլատրելիություն, ապացույցների ներկայացում, պաշտպանության իրավունք:

Ключевые слова: предварительные слушания, обвинения, допустимость доказательств, представление доказательств, право на защиту.

Keywords: preliminary hearings, charges, admissibility of evidence, presentation of evidence, right to defense.

ՄԻՐԶԱՋԱՆՅԱՆ ՍՐԲՈՒՀԻ
Հայաստանի եվրոպական համալսարանի իրավագիտության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետի իրավագիտության բաժնի 4-րդ կուրսի ուսանող

MIRZAJANYAN SRBUHI
4th year student of the Department of Law of the Faculty of Law and Internatioal Relations of the European University of Armenia

МИРЗАДЖАНЯН СРБУИ
студент 4-го курса факультета права и международных отношений Европейского университета Армении

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔՆՆԻՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ՝ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ*

THE PROTECTION OF HUMAN RIGHTS AND FUNDAMENTAL FREEDOMS AS A GUARANTEE OF THE LEGALITY OF THE INVESTIGATOR'S ACTIVITIES IN THE LIGHT OF RECENT LEGAL REFORMS*

ЗАЩИТА ПРАВ И ОСНОВНЫХ СВОБОД ЧЕЛОВЕКА КАК ГАРАНТИЯ ЗАКОННОСТИ ДЕЯТЕЛЬНОСТИ СЛЕДОВАТЕЛЯ В СВЕТЕ ПОСЛЕДНИХ ПРАВОВЫХ РЕФОРМ*

Ամփոփագիր

Հոդվածի շրջանակներում քննարկման առարկա է դարձվել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորությունը նախաքննության օրինականության համատեքստում: 2014 թվականին ՀՀ քննչական կոմիտեի ստեղծումը նպատակ ուներ ձևավորել արտագերատեսչական, միասնական նախաքննական համակարգ՝ ապահովելով անկախ և միասնական նախաքննական քաղաքականության իրականացում: Այս գաղափարը կարևոր էր այնքանով, որ նախկինում տարբեր գերատեսչությունների կազմում գործող նախաքննական մարմինները ցուցաբերում էին տարբերակված մոտեցումներ, ինչը բացասաբար էր ազդում ինչպես քննչական գործընթացի որակի, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության վրա:

Հաշվի առնելով վերագրյալը, պետք է նշել, որ մարդու իրավունքների պաշտպանության դերն ավելի ընդգծվեց քրեական արդարադատության բնագավառում կատարված փոփոխությունների արդյունքում: Նոր քրեական դատավարության օրենսգրքի շրջանակներում ամրագրեց մի շարք կարևոր իրավակարգավորումներ, որոնցից մի քանիսին անդրադարձ է կատարվել սույն հոդվածում:

Նախևառաջ խոսվել է հանրայնության սկզբունքի ՝ որպես քրեադատավարական սկզբունքի ամրագրման կարևորության մասին: Հանրայնության սկզբունքը նախատեսում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռություն, ինչը նախաքննության ընթացքում նպաստում է մարդու իրավունքների պահպանմանը:

Կարևոր փոփոխությունը, որին անդրադարձ է կատարվել՝ տեսաձայնագրման ինստիտուտն է, ինչն իր հերթին, խթանում է քննչական գործողությունների թափանցիկությանը: Բացի այդ, նոր Օրենսգրքով հստակեցվեցին հանրային քրեական հետապնդման ժամկետները, ինչը թույլ տվեց կանխել անձանց իրավունքների անհարկի սահմանափակումը: Հատուկ ուշադրություն դարձվեց նաև անչափահասների և խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությանը՝ ներգրավելով որակավորված հոգեբաններ նրանց մասնակցությամբ քննչական գործողությունների իրականացման ընթացքում:
Չնայած այս բարեփոխումներին, դեռևս առկա են խորհրդային տարիներից մնացած իրավամտածողության որոշակի տարրեր, որոնք խոչընդոտում են քննիչի՝ որպես ‹‹արդարության վերականգնողի›› դերի լիարժեք ըմբռնմանը: Ուստի, անհրաժեշտ է մշակել տարբեր կառուցակարգեր, որոնք կնպաստեն հասարակության մեջ քննիչի աշխատանքին առնչվող սխալ ընկալումների վերացմանը՝ ամրապնդելով ՀՀ Քննչական կոմիտեի նկատմամբ վստահությունը:

Annotation

Within the framework of the article, the importance of protecting human rights and freedoms in the context of the legality of the preliminary investigation is discussed. In 2014, the creation of the RA Investigative Committee aimed to form an extra-departmental, unified pre-examination system based on the implementation of an independent and unified pre-examination policy. This idea was emphasized to the extent that in the past, the pre-investigative bodies that existed within different departments showed differentiated approaches, which had a negative impact on both the investigative process and the protection of human rights.

Taking into account the abovementioned, it should be noted that the role of human rights protection was further emphasized as a result of the changes made in the field of criminal justice.Within the framework of the new Criminal Procedure Code, a number of important legal regulations were established, some of which are referred to in this article.

First, the importance of establishing the principle of publicity as a criminal procedure principle was discussed.The principle of publicity provides for the balancing of public and private interests, which contributes to the preservation of human rights during the preliminary investigation. The important change that was referred to is the institute of video recording, which, in turn, promotes the transparency of investigative actions.In addition, the new code specified the terms of public criminal prosecution, which allowed to prevent the unnecessary restriction of people's rights. Special attention was also paid to the protection of the rights of minors and vulnerable groups by involving qualified psychologists during investigative operations involving them.

Despite these reforms, there are still certain elements of legal thinking left over from the Soviet years, which hinder the full understanding of the investigator's role as a "restorer of justice". Therefore, it is necessary to develop various procedures that will contribute to the elimination of misconceptions related to the work of the investigator in the society, strengthening the trust in the investigative committee of the RA.

Аннотация

В рамках статьи обсуждается важность защиты прав и свобод человека в контексте законности предварительного следствия. Целью создания Следственного комитета РА в 2014 году было формирование вневедомственной единой системы дознания, обеспечивающей независимое и единое предварительное расследование. Эта идея была важна постольку, поскольку в прошлом органы дознания, действовавшие в рамках разных ведомств, проявляли дифференцированные подходы, что негативно сказывалось как на качестве следственного процесса, так и на защите прав человека.

Учитывая вышеизложенное, следует отметить, что роль защиты прав человека стала более значимой в результате изменений, произошедших в сфере уголовного правосудия. В рамках нового Уголовно-процессуального кодекса был установлен ряд важных правовых норм, некоторые из которых упомянуты в данной статье.

В первую очередь обсуждается важность закрепления принципа гласности как принципа уголовного процесса. Принцип гласности предусматривает баланс публичных и частных интересов, что способствует сохранению прав человека в ходе предварительного следствия. Важным институтом, о котором говорилось, является институт видеозаписи, который сам по себе подрывает прозрачность следственных действий. Кроме того, новый кодекс уточнил условия публичного уголовного преследования, что позволило предотвратить необоснованное ограничение прав личности. Особое внимание также было уделено защите прав несовершеннолетних и уязвимых групп населения путем привлечения квалифицированных психологов с их участием при осуществлении следственных мероприятий.

Несмотря на эти реформы, еще остались некоторые элементы правопонимания советских лет, которые мешают полноценному пониманию роли следователя как «восстановителя справедливости». Поэтому необходимо разработать различные процедуры, которые будут способствовать устранению в обществе заблуждений, связанных с деятельностью следователя, укреплению доверия к Следственному комитету РА.

Հիմնաբառեր՝ օրինականություն, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանություն, քննչական գործողություն, քրեաիրավական բարեփոխումներ, նախաքննություն, իրավամտածողություն:

Keywords: legality, protection of human rights and freedoms, investigative operation, criminal amendments, inestigation, legal thinking.

Ключевые слова: законность, защита прав и свобод человека, следственные действия, реформа уголовного законодательства, следствие, юриспруденция.

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ / CRIMINAL LAW AND CRIMINOLOGY / УГОЛОВНОЕ ПРАВО И КРИМИНОЛОГИЯ

ԲԱԲԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ
ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի օգնական, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դասախոս

BABAKHANYAN ARMAN
Assistant to the Judge of the Criminal Chamber of the Cassation Court of the RA, Lecturer at Chair of Criminal Law of YSU

БАБАХАНЯН АРМАН
Помощник судьи Уголовной палаты Кассационного суда РА, преподаватель кафедры уголовного права ЕГУ

ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՈՒԿ ՀԱՆՑԱԿԱԶՄԵՐ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ*

THE NECESSITY OF PROVIDING FOR SPECIAL CORPUS DELICTI RELATED TO THE CRIMINAL SUBCULTURE*

НЕОБХОДИМОСТЬ ПРЕДУСМОТРЕНИЯ СПЕЦИАЛЬНЫХ СОСТАВОВ ПРЕСТУПЛЕНИЙ, СВЯЗАННЫХ С КРИМИНАЛЬНОЙ СУБКУЛЬТУРОЙ*

Ամփոփագիր

Սույն հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում քրեական ենթամշակույթին առնչվող հատուկ հանցակազմեր նախատեսելու անհրաժեշտության քննարկմանը: Հարկ է նշել, որ այդ հարցը, քրեական ենթամշակույթին առնչվող արարքները քրեականացնելիս, պատշաճ վերլուծության չի ենթարկվել, հետևաբար՝ այս հարցին ավելի մանրամասն անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը, կարծում ենք, շարունակում է արդիական մնալ:

Վերոգրյալով պայմանավորված՝ հեղինակն անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք մինչև քրեական ենթամշակույթին առնչվող արարքներ նախատեսող հանցակազմերի սահմանումը Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքում գործող քրեաիրավական գործիքակազմը թույլ էր տալիս արդյունավետ քրեաիրավական պայքար մղել քրեական ենթամշակույթի դեմ: Բացի այդ, հեղինակը քննարկման առարկա է դարձրել, թե արդյո՞ք առկա է քրեական ենթամշակույթին առնչվող արարքներ նախատեսող, Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքի 322-325-րդ հոդվածներում նախատեսված հանցակազմերը պահպանելու անհրաժեշտությունը:

Արդյունքում, հեղինակը հանգել է հետևության, որ ինչպես Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի գործողության պայմաններում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքի գործողության պայմաններում քրեական ենթամշակույթին առնչվող արարքներ նախատեսող հատուկ հանցակազմեր սահմանելու անհրաժեշտությունն առկա է (էր), և այդպիսի հանցակազմերի բացակայությունն էականորեն կխոչընդոտեր քրեական ենթամշակույթի դեմ արդյունավետ քրեաիրավական պայքար մղելուն:

Annotation

This article is dedicated to the discussion of the necessity to provide for special corpus delicti of the offences related to criminal subculture in the Criminal Code of the Republic of Armenia. It should be noted that this issue has not been properly analysed during criminalisation of acts related to criminal subculture, therefore, we believe that the need for a more detailed consideration of this issue remains relevant.

In connection with the above, the author raised the question whether the criminal-legal instruments in force in the former Criminal Code of the Republic of Armenia, prior to the criminal offences related to criminal subculture, allowed for an effective criminal-legal fight against criminal subculture. In addition, the author made it a subject of discussion whether it is necessary to preserve the corpus delicti of the offences envisaged in articles 322-325 of the current Criminal Code of the Republic of Armenia, providing for actions related to criminal subculture.

As a result, the author came to the conclusion that both in the former Criminal Code of the Republic of Armenia and in the current Criminal Code of the Republic of Armenia there is (was) a need to provide for special corpus delicti providing for acts related to criminal subculture, and the absence of such corpus delicti would significantly hinder the effective criminal-legal fight against criminal subculture.

Аннотация

Данная статья посвящена обсуждению необходимости предусмотреть в Уголовном кодексе Республики Армения специальные составы преступления, относящиеся к криминальной субкульнальной субкультурой, не подвергался должному анализу, поэтому, полагаем, необходимость более детального рассмотрения данного вопроса остается актуальной.

В связи с вышеизложенным автор затронул вопрос о том, позволяли ли уголовно-правовые инструменты, действовавшие в бывшем Уголовном кодексе Республики Армения, до предусмотрения уголовных правонарушений, связанных с криминальной субкультурой, вести эффективную уголовно-правовую борьбу с криминальной субкультурой. Кроме того, автор сделал предметом дискуссии вопрос о необходимости сохранения составов преступлений, предусмотренных статьями 322-325 действующего Уголовного кодекса Республики Армения, предусматривающими действия, связанные с криминальной субкультурой.

В результате автор пришел к выводу, что как в бывшем Уголовном кодексе Республики Армения, так и в условиях действующего Уголовного кодекса Республики Армения существует (была) необходимость предусмотрения специальных составов преступлений, предусматривающих деяния, связанные с криминальной субкультурой, а отсутствие таких состав преступлений существенно затрудняло бы эффективную уголовно-правовую борьбу с криминальной субкультурой.

Հիմնաբառեր՝ գողական աշխարհ, քրեական ենթամշակույթ, օրենքով գող, քրեականացում, հանցավոր կազմակերպություն, օրենքով չնախատեսված զինված միավորում:

Keywords: thieves' world, criminal subculture, thief in law, criminalization, criminal organization, armed association not provided for by law.

Ключевые слова: воровской мир, криминальная субкультура, вор в законе, криминализация, преступная организация, вооруженное объединение, не предусмотренное законом.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

ISSN 2579-2806

ԲԱՆԲԵՐ

Արդարադատության ակադեմիայի

BULLETIN

of Academy of Justice

ВЕСТНИК

Академии юстиции

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ SCIENTIFIC - PRACTICAL JOURNAL НАУЧНО - ПРАКТИЧЕСКИЙ ЖУРНАЛ

2025 1(14)

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ / PUBLIC LAW / ПУБЛИЧНОЕ ПРАВО

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ՀՀ արդարադատության ակադեմիայի գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավար, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

GALSTYAN ANAHIT
Head of the Unit of Organization of Scientific Research and Programmatic-methodological activities of the Academy of Justice RA, Postgraduate student of the YSU Chair of Constitutional Law

ГАЛСТЯН АНАИТ
Руководитель отдела по организации научно-исследовательских и программно-методических работ Академии юстиции РА, аспирант кафедры конституционного права ЕГУ

ԵՐԵՎԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ*

FINANCIAL-ECONOMIC STATUS, SOCIAL-ECONOMIC INDICATORS AND LEGAL FIELD OF LOCAL SELF-GOVERNMENT OF YEREVAN*

ФИНАНСОВО-ЭКОНОМИЧЕСКИЙ СТАТУС, СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ПОКАЗАТЕЛИ И ЗАКОНОДАТЕЛЬНАЯ ОСНОВА МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ ЕРЕВАНА*

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է Երևանի ֆինանսատնտեսական կարգավիճակի իրավական հիմքերի, սոցիալ-տնտեսական հիմնարար ցուցանիշների և Երևանի տեղական ինքնակառավարման համակարգի օրենսդրական հիմքերի վերլուծությանն ու գնահատմանը:

Հեղինակը նշել է, որ Երևանի իրավական համակարգի, ֆինանսատնտեսական, սոցիալ-տնտեսական հիմքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև մայրաքաղաքն ունի օրենսդրորեն ամրագրված առանձնահատուկ կարգավիճակ, այնուամենայնիվ, կարգավիճակի գործնական իրացումը հաճախ բախվում է համակարգային սահմանափակումների:

Հեղինակը եզրահանգել է, որ Երևանի՝ որպես մայրաքաղաքի արդյունավետ կառավարումը պահանջում է օրենսդրական կատարելագործման, ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման և հանրային մասնակցության մշակույթի զարգացման միջև համադրություն, ինչպես նաև՝ պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների սահմանների հստակեցում՝ բացառելով ապակենտրոնացման սկզբունքի խախտումները: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի ոչ միայն ապահովել լիարժեք տեղական ինքնակառավարում, այլև՝ վերածել Երևանը ժամանակակից քաղաքային կառավարման օրինակելի մոդելի՝ ամբողջ հանրապետության համար:

Annotation

The article is dedicated to the analysis and assessment of the legal bases of Yerevan financial-economic status, basic socio-economic indicators, and legislative bases of local self-government system.

The author noted that the analysis of the legal system, financial-economic and socio-economic foundations of Yerevan shows that although the capital has a special status envisaged in the legislation, the practical implementation of the status often encounters systemic limitations.

The author concluded that effective governance of Yerevan as the capital requires a combination of improving legislation, building institutional capacity and developing a culture of public participation, as well as clarifying the boundaries of competence of state and local self-government bodies, excluding the violation of the principle of decentralization.

In mentioned circumstances it will be possible not only to ensure complete local self-government, but also to turn Yerevan into an exemplary model of modern urban governance for the entire republic.

Аннотация

Статья посвящена анализу и оценке правовых основ финансово-экономического статуса города Еревана, основных социально-экономических показателей, законодательных основ системы местного самоуправления города.

Автор отмечает, что анализ правовой системы, финансово-экономических и социально-экономических основ Еревана показывает, что хотя столица имеет особый статус, закрепленный в законодательстве, практическая реализация этого статуса зачастую сталкивается с системными ограничениями.

Автор приходит к выводу, что для эффективного управления Ереваном как столицей необходимо сочетание совершенствования законодательства, наращивания институционального потенциала и развития культуры общественного участия, а также уточнение границ компетенции органов государственной власти и органов местного самоуправления, исключающее нарушение принципа децентрализации.

Только тогда можно будет не только обеспечить полноценное местное самоуправление, но и превратить Ереван в образцовую модель современного городского управления для всей республики.

Հիմնաբառեր՝ Երևանի ֆինանսատնտեսական կարգավիճակ, սոցիալ-տնտեսական ցուցանիշներ, տեղական ինքնակառավարման օրենսդրական դաշտ, հանրային մասնակցություն:

Key words: financial-economic status of Yerevan, socio-economic indicators, legislative framework of local self-government, public participation.

Ключевые слова: финансово-экономический статус Еревана, социально-экономические показатели, законодательные основы местного самоуправления, участие общественности.

ՇԱՖԱԼՈՎԻՉ ԱՆՆԱ
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Բելառուսի պետական տնտեսագիտական համալսարանի
իրավունքի տեսության և պատմության ամբիոնի դոցենտ

SHAFALOVICH ANNA
Candidate of Legal Sciences, Associate Professor,
Associate Professor of the Department of Theory and History
of Law of the Belarusian State Economic University

ШАФАЛОВИЧ АННА
Кандидат юридических наук, доцент,
доцент кафедры теории и истории права Белорусского
государственного экономического университета

ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆԸ*

LEGALITY AND LEGITIMACY OF SOURCES OF LAW OF THE REPUBLIC OF BELARUS*

ЛЕГАЛЬНОСТЬ И ЛЕГИТИМНОСТЬ ИСТОЧНИКОВ ПРАВА РЕСПУБЛИКИ БЕЛАРУСЬ*

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում է Բելառուսի Հանրապետության իրավունքի հիմնական աղբյուր հանդիսացող նորմատիվ իրավական ակտերի լեգալացման գործընթացը՝ մասնագիտացված օրենքի և ոլորտային օրենսգրքերի շրջանակում, ինչպես նաև իրավունքի երկրորդական աղբյուրների, այդ թվում՝ իրավական սովորույթի և իրավական դոկտրինի օրինականացումը:

Հեղինակը հանգում է եզրակացության, որ Բելառուսի Հանրապետության իրավունքի աղբյուրների օրինականացման գործընթացը դեռևս թերի է: Նորմատիվ ակտերի օրինականացման անավարտ լինելը պայմանավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի և ոլորտային օրենսգրքերի միջև առկա նորմատիվ հակասություններով:

Հեղինակը շեշտում է ոլորտային օրենսգրքերը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 3-րդ հոդվածին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը՝ որպես Բելառուսի Հանրապետության օրենսդրությունը կազմող ակտերի միասնական համակարգի ստեղծման տեսանկյունից բելառուսական իրավունքի առաջատար աղբյուրը օրինականացնող հատուկ օրենք:

Բացի դրանից, իրավունքի այլ աղբյուրների օրինականացման անկատար լինելը և դրանց իրավական ուժի անորոշությունը պայմանավորված են իրավունքի աղբյուրների միասնական համակարգ սահմանող նորմատիվ ակտի բացակայությամբ:

Իրավական սովորույթն օրինականացնելու նպատակով առաջարկվում է օրենսդրորեն Գերագույն դատարանին կամ Բելառուսի առևտրաարդյունաբերական պալատին վերապահել հնարավորություն վարել իրավակիրառության մեջ օրինականացված սովորույթների հաշվառում:

Առաջարկվում է նաև օրինականացնել իրավունքի աղբյուր հանդիսացող դատական նախադեպը և իրավունքի ընդհանուր սկզբունքները՝ որպես իրավունքի նորարարական միտումներ:

Annotation

The article examines the legalization of normative legal acts, as the main source of Belarusian law, in the specialized law and in sectoral codes, as well as the legalization of secondary sources of Belarusian law, including legal custom and legal doctrine. As a result of the study, the author concludes that the process of legalization of the sources of Belarusian law is incomplete. Legalization of normative legal acts has not been completed due to the conflict of norms on the system of acts constituting legislation according to the Law 'On Normative Legal Acts' and sectoral codes. The author recognizes the need to bring the sectoral codes in compliance with Article 3 of the Law «On Normative Legal Acts» as a special law legalizing the leading source of Belarusian law in terms of creating a unified system of acts constituting the legislation of the Republic of Belarus. The incomplete legalization of other sources of law and the uncertainty of their legal force arise from the fact that at present there is no single normative act on the system of sources of law of the Republic of Belarus. The final stage of the process of legalization of the sources of law of the Republic of Belarus is the legislative consolidation and recognition of the main and auxiliary sources of law de jure, and not de facto, as it is now, by adopting a Code on the sources of law of the Republic of Belarus as the foundation of the legal system. To legalize legal custom, it is proposed that the Supreme Court or the Belarusian Chamber of Commerce and Industry should keep records of customs legalized in law enforcement. In the article it is proposed to legalize the sources of law demanded by the trends of innovative development of the state and law - judicial precedent and general principles of law.

Аннотация

Статья рассматривает легализацию нормативных правовых актов, как основного источника белорусского права, в специализированном законе и в отраслевых кодексах, а также легализацию второстепенных источников белорусского права, в том числе правового обычая и правовой доктрины. В результате исследования автор приходит к выводу о незавершенности процесса легализации источников права Республики Беларусь. Легализация нормативных правовых актов не завершена по причине коллизионности норм о системе актов, составляющих законодательство, согласно Закону «О нормативных правовых актах» и отраслевым кодексам.

Автор признает потребность в приведении отраслевых кодексов в соответствие в части создания единой системы актов, составляющих законодательство Республики Беларусь, со ст. 3 Закона «О нормативных правовых актах», как специальным законом, легализирующим ведущий источник белорусского права. Незавершенная легализация иных источников права и неопределенность их юридической силы вытекают из факта, что в настоящий момент единый нормативный акт о системе источников права Республики Беларусь отсутствует. Окончательным этапом процесса легализации источников права Республики Беларусь видится законодательное закреп-ление и признание основных и вспомогательных источников права деюре, а не дефакто, как то имеет место сейчас, путем принятия кодекса об источниках права Республики Беларусь, как фундамента правовой системы.

Для легализации правового обычая предлагается законодательное закрепление за Верховным Судом или Белорусской торгово-промышленной палатой ведения учета легализированных в правоприменении обычаев. В статье предлагается легализировать источники права, востребованные тенденциями инновационного развития государства и права – судебный прецедент и общие принципы права.

Հիմնաբառեր՝ նորմատիվ իրավական ակտ, օրինականություն, լեգիտիմություն, իրավաստեղծ գործունեություն, իրավունքի աղբյուրներ, իրավական սովորույթ, դատական նախադեպ, դատական պրակտիկա, իրավական դոկտրինա, իրավունքի ընդհանուր սկզբունքներ:

Keywords: normative legal act, legality, legitimacy, rule-making, sources of law, legal custom, judicial precedent, judicial practice, legal doctrine, general principles of law.

Ключевые слова: нормативный правовой акт, легальность, легитимность, нормотворческая деятельность, источники права, правовой обычай, судебный прецедент, судебная практика, правовая доктрина, общие принципы права.

ՊԻՏՈՒԼԿՈ ԿՍԵՆԻԱ
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Արդարադատության համառուսական պետական համալսարանի Սանկտ Պետերբուրգի ինստիտուտի (մասնաճյուղի) քրեական իրավունքի և դատավարության ամբիոնի վարիչ

PITULKO KSENIIA
Candidate of Legal Sciences, Associate Professor, Head of the Chair of Criminal Law and Procedure of the Saint Petersburg's Institute (Branch) of the All-Russian State University of Justice

ПИТУЛЬКО КСЕНИЯ
Кандидат юридических наук, доцент, заведующая кафедрой уголовного права и процесса Санкт-Петербургского института (филиала) Всероссийского государственного университета юстиции

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ. ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ*

CURRENT ENVIRONMENTAL SITUATION IN RUSSIA: MAIN CHARACTERISTICS*

СОВРЕМЕННАЯ ЭКОЛОГИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В РОССИИ: ОСНОВНЫЕ ХАРАКТЕРИСТИКИ*

Ամփոփագիր

Ուսումնասիրության նպատակն է համեմատական վերլուծության միջոցով բացահայտել ժամանակակից Ռուսաստանում հասարակության բնապահպանական շահերի պաշտպանության մակարդակի վրա ազդող հիմնական գործոնները: Ուսումնասիրությունն իրականացվել է 2016-2024 թվականների ընթացքում կուտակված տվյալների սինթեզմամբ: Վերլուծությունը հիմնված է շրջակա միջավայրի վրա մարդածին ազդեցության բնույթի, բնական և տեխնոգեն արտակարգ իրավիճակների կառուցվածքի, ինչպես նաև բնակչության բնապահպանական բարեկեցության գնահատման տվյալների վրա: Վիճակագրական տվյալների մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության նկատմամբ պետական վերահսկողության էական թուլացման միտում: Այս հանգամանքը դիտվում է որպես շրջակա միջավայրի բնապահպանական բարեկեցության մակարդակի անկման լուրջ վտանգ: Միաժամանակ բնապահպանական շահերի պաշտպանության հասարակական ընկալումն աչքի է ընկնում թերահավատությամբ և վստահության պակասով: Չնայած այն հանգամանքին, որ Ռուսաստանն ունի զարգացած իրավական համակարգ՝ բնապահպանական հանցագործությունները վերահսկելու և դրանց համեմատաբար ցածր տարածվածությունն ապահովելու համար, ինչպես բնապահպանական իրավախախտումներից, այնպես էլ բնապահպանական վերահսկողության շրջանակներից դուրս իրականացվող այլ տեսակի մարդածին ազդեցության պատճառով առաջացած վնասի ռիսկը մնում է չափազանց բարձր: Այս իրողությունը փաստում է, որ անհրաժեշտ է շարունակաբար կատարելագործել բնապահպանական ոլորտի օրենսդրական դաշտը և դրա կիրառման գործնական մեխանիզմները՝ բնապահպանական անվտանգությունն ու կայուն զարգացումը ապահովելու նպատակով:

Annotation

The purpose of this study is to identify the key factors influencing the level of protection of environmental interests of society in modern Russia through a comparative analysis. The research was conducted using the method of data synthesis based on statistics collected between 2016 and 2024. The analysis focused on the nature of anthropogenic impact on the environment, on the structure of natural and man-made emergencies, as well as indicators assessing the population's environmental well-being. Statistical monitoring revealed a tendency of significant weakening of state control over the economic activities of business entities, which is seen as a serious risk factor for the deterioration of environmental well-being. At the same time, the public perception of the protection of environmental interests is characterized by skepticism and a lack of trust. Despite the fact that Russia has a sufficiently developed legal system to control environmental crimes and ensure their relatively low prevalence, the damage caused by both environmental offenses and uncontrolled anthropogenic activities remains extremely high. This indicates the need for further improvement of environmental legislation and mechanisms for its practical implementation in order to ensure environmental security and sustainable development.

Аннотация

Целью исследования является выявление основных факторов, влияющих на уровень защищённости экологических интересов общества в условиях современной России путём проведения сравнительного анализа. Исследование выполнено методом синтеза данных, накопленных за период с 2016 по 2024 годы. В основу анализа легли сведения о характере антропогенного воздействия на окружающую среду, о структуре чрезвычайных ситуаций природного и техногенного характера, а также об оценке экологического благополучия населения. Мониторинг статистических данных выявил тенденцию значительного ослабления государственного контроля за экономической деятельностью хозяйствующих субъектов. Этот фактор рассматривается как серьёзный риск ухудшения уровня экологического благополучия. Одновременно восприятие обществом защищённости экологических интересов носит скептический характер и сопровождается дефицитом доверия. Несмотря на то, что в России сформирована достаточно развитая правовая система, позволяющая контролировать экологические преступления и обеспечивать их относительно низкую распространённость, ущерб, причиняемый как экологическими правонарушениями, так и иными видами антропогенного воздействия, осуществляемыми вне рамок экологического контроля, остаётся чрезвычайно высоким. Это свидетельствует о необходимости дальнейшего совершенствования законодательства в сфере экологии и механизмов его практической реализации с целью обеспечения экологической безопасности и устойчивого развития.

Հիմնաբառեր՝ շրջակա միջավայր, էկոլոգիական բարեկեցություն, բնապահպանական իրավիճակ, բնապահպանական հանցագործություն, բնական ռեսուրսներ:

Key words: environment, environmental well-being, environmental situation, environmental crime, natural resources.

Ключевые слова: окружающая среда, экологическое благополучие, экологическая ситуация, экологическая преступность, природные ресурсы.

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՇՈՏ
Դիպլոմավորված իրավաբան, ԳԴՀ Բոննի Ֆրիդրիխ Վիլհելմի անվան համալսարանի ասպիրանտ, փաստաբան

POGHOSYAN ASHOT
Certified Lawyer, PhD Candidate at the University of Bonn (Friedrich Wilhelm University, Germany), Attorney-at-Law

ПОГОСЯН АШОТ
Дипломированный юрист, аспирант Университета Бонна имени Фридриха Вильгельма (Германия), адвокат

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՋ. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԵՏ ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

LEGALITY OF ADMINISTRATIVE ACTS OVER TIME: A COMPARATIVE LEGAL ANALYSIS WITH GERMANY*

ЗАКОННОСТЬ АДМИНИСТРАТИВНОГО АКТА ВО ВРЕМЕНИ: СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ С ГЕРМАНИЕЙ*

Ամփոփագիր

Վարչական ակտի օրինականությունը ժամանակի ընթացքում կարող է փոխվել՝ թե՛ ի վնաս քաղաքացու, թե՛ ի շահ նրա: Վարչական ակտի օրինականությունը գնահատելիս դատարանի համար որոշիչ նորմատիվ դրույթը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածն է, որը սկզբունքորեն սահմանում է ճիշտ որոշումը:

Ընդհանրապես, վիճարկման հայցի շրջանակներում վարչական ակտի օրինականությունը պետք է ստուգվի ակտի ընդունմանը հանգեցրած վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցների և դրա ընդունման պահին գործող օրենսդրության հիման վրա: Գործողություն հարկադրելու կամ կատարելու պահանջի դեպքում հայցվող բարենպաստ վարչական ակտի կամ գործողության/անգործության օրինականությունը որոշվում է դատական ակտի կայացման պահին առկա ապացույցների և այդ պահին գործող օրենսդրության հիման վրա: Սակայն, ինչպես ցանկացած սկզբունք, այս սկզբունքը ևս պետք է ունենա բացառություններ: Հատկապես այն դեպքերում, երբ իրավիճակը կամ օրենսդրությունը փոխվում է ի վնաս քաղաքացու: Նման դեպքերում պետությունը՝ ի դեմս վարչական դատարանների, պարտավոր է պաշտպանել այդ իրավունքները և օրենքը մեկնաբանելիս՝ հաշվի առնել Սահմանադրության պահանջները:

Հատկանշական է, որ Գերմանիայի վարչ. դատ. օրենսգիրքը, որը չի պարունակում ՀՀ վարչ. դատ. օր.-ի 124-րդ հոդվածի նման դրույթ, ավելի ճկուն հնարավորություններ է ստեղծում իրավակիրառ պրակտիկայի համար: Մինչդեռ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի տառացի կիրառումը կարող է հանգեցնել լուրջ խնդիրների:

Annotation

The legality of an administrative act can change over time - sometimes to the detriment of the citizen, sometimes to their benefit. When assessing the legality of an administrative act, the decisive norm for the court is Article 124 of the Administrative Procedure Code of the Republic of Armenia, which, in principle, offers the correct solution.

As a rule, the legality of an administrative act, within the scope of an annulment claim, must be assessed based on the evidence obtained during the administrative proceedings that led to its adoption and in accordance with the laws in force at the time of its issuance. When it comes to a claim for enforcement or performance of an action, the legality of the requested favorable administrative act or action/inaction is determined on the basis of the evidence available at the time of the judicial decision and the laws in force at that moment. However, like any principle, this one must also allow for exceptions - especially when the situation or legislation changes to the detriment of the citizen. In such cases, the state, represented by the administrative courts, has an obligation to protect those rights and, when interpreting the law, must take into account the requirements of the Constitution.

It is noteworthy that the German Administrative Procedure Code, while lacking a provision analogous to Article 124 of the RA APC, allows for a more flexible approach in judicial practice. In contrast, a purely literal application of Article 124 of the RA APC may lead to complex problems.

Аннотация

Законность административного акта может со временем измениться – как в ущерб гражданину, так и в его пользу. При оценке законности административного акта решающим нормативным положением для суда является статья 124 Административно-процессуального кодекса Республики Армения, которая, в принципе, устанавливает правильное решение.

В общем порядке законность административного акта в рамках иска об оспаривании должна проверяться на основе доказательств, полученных в ходе административного производства, приведшего к принятию акта, и на основании законодательства, действующего на момент его принятия. В случае иска о принуждении или совершении действия законность требуемого благоприятного административного акта или действия/бездействия определяется на основании доказательств, имеющихся на момент вынесения судебного акта, и законодательства, действующего на тот момент. Тем не менее, как и любой принцип, данный принцип также должен иметь свои исключения. Особенно в случаях, когда ситуация или законодательство меняется в ущерб гражданину. В таких случаях государство в лице административных судов обязано защищать эти права и при толковании закона учитывать требования Конституции.

Примечательно, что Административно-процессуальный кодекс Германии, не содержащий положения, аналогичного статье 124 АПК РА, создает более гибкие возможности для правоприменительной практики. В то время как буквальное применение статьи 124 АПК РА может привести к серьезным проблемам.

Հիմնաբառեր՝ վարչական ակտ, իրավաչափություն, վիճարկման հայց, պարտավորեցման հայց, վարչական վարույթ, նոր ապացույց, հետադարձ ուժ, վստահության իրավունք, սահմանադրական մեկնաբանություն, թելեոլոգիական ռեդուկցիա:

Keywords: administrative act, legality, annulment claim, enforcement claim, administrative procedure, new evidence, retroactive effect, right to legal certainty, constitutional interpretation, teleological reduction.

Ключевые слова: административный акт, законность, иск об оспаривании, иск о принуждении, административное производство, новые доказательства, обратная сила закона, право на доверие, конституционное толкование, телеологическая редукция.

ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔ / PRIVATE LAW / ЧАСТНОЕ ПРАВО

ԱԲԴՈՒԼԼԱԵՎԱ ՊԱՐՎԻՆԱ
Ուզբեկստանի Հանրապետության իրավապահ մարմինների ակադեմիայի դոկտորանտ

ABDULLAEVA PARVINA
Doctoral student at the Academy of Law Enforcement Agencies of the Republic of Uzbekistan

АБДУЛЛАЕВА ПАРВИНА
Докторант Академии правоохранительных органов Республики Узбекистан

ՀԱՐԹԱԿԱՅԻՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՉ ՍՏԱՆԴԱՐՏ ՁԵՎԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ*

LEGAL CHALLENGES IN REGULATING PLATFORM WORK AND NON-STANDARD FORMS OF EMPLOYMENT: MODERN APPROACHES AND THE NEED FOR REFORM*

ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ РЕГУЛИРОВАНИЯ ПЛАТФОРМЕННОЙ ЗАНЯТОСТИ И НЕСТАНДАРТНЫХ ФОРМ ТРУДА: СОВРЕМЕННЫЕ ПОДХОДЫ И НЕОБХОДИМОСТЬ РЕФОРМ*

Ամփոփագիր

Հոդվածում ներկայացվում է թվային տնտեսության և տեխնոլոգիական զարգացման պայմաններում ոչ ստանդարտ զբաղվածության իրավական կարգավորման համապարփակ վերլուծություն՝ հատկապես առցանց հարթակների միջոցով իրականացվող աշխատանքային գործունեության համատեքստում: Այսօր ավանդական աշխատանքային պայմանագրերը աստիճանաբար փոխարինվում են քաղաքացիաիրավական պայմանագրերով, ինչը լուրջ խնդիրներ է ստեղծում աշխատողների սոցիալական երաշխիքների, աշխատանքային իրավունքների և կենսաթոշակային ապահովագրության ապահովման հարցում: Հոդվածում դիտարկվում է առցանց հարթակներում զբաղվածության իրավական կարգավիճակի անորոշությունը, աշխատողի և կատարողի միջև հարաբերությունների ճիշտ դասակարգման բարդությունները, ինչպես նաև «տնտեսապես կախյալ աշխատողի» հասկացության կարևորությունը: Միաժամանակ, վերլուծության են ենթարկվում աշխատանքային իրավունքի նորմերի կիրառման գործնական դժվարությունները՝ երբ գործատուի լիազորություններն իրականացվում են ոչ ստանդարտ աշխատանքային հարաբերությունների մի քանի սուբյեկտների կողմից:

Հոդվածում վերլուծության են ենթարկվում աշխատողի կարգավիճակը որոշելու նպատակով դատական պրակտիկայում օգտագործվող չափանիշները, ինչպիսիք են՝ աշխատողի անկախության աստիճանը և հարթակի կողմից վերահսկողության մակարդակը: Ընդգծվում է, որ Ուզբեկստանի գործող իրավական դաշտը լիարժեք չի ընդգրկում այս տեսակի զբաղվածությունը, և առաջարկվում են փոփոխություններ աշխատանքային օրենսգրքում և այլ նորմատիվ փաստաթղթերում: Հեղինակը հիմնավորում է իրավական բարեփոխումների անհրաժեշտությունը՝ նման աշխատանքային հարաբերությունները հստակ սահմանելու, սոցիալական երաշխիքներ ապահովելու և «ստվերային տնտեսության» ծավալները նվազեցնելու համար:

Annotation

This article provides a comprehensive analysis of the legal regulation of non-standard forms of employment in the context of the digital economy and technological development, with a particular focus on labor activities carried out through online platforms. Today, traditional labor contracts are gradually being replaced by civil law agreements, which creates serious challenges in ensuring workers' social guarantees, labor rights, and pension benefits. The article discusses the ambiguity of the legal status of employment via online platforms, the complexity in categorizing the relationships between workers and contractors, and the relevance of the concept of "economically dependent worker." It also examines practical difficulties in applying labor law norms when employer functions are performed by multiple entities in non-standard labor relations. The article analyzes criteria used in court practices to determine employee status, such as worker independence and the degree of platform control. It highlights the insufficiency of the current legal framework in Uzbekistan to fully cover this form of employment and proposes amendments to the Labor Code and other normative documents. The author argues for legal reforms to clearly define such labor relations, ensure social guarantees, and reduce the scale of the "shadow economy."

Аннотация

В статье проводится комплексный анализ правового регулирования нестандартных форм занятости в условиях цифровой экономики и технологического развития с особым акцентом на трудовую деятельность, осуществляемую через онлайн-платформы. Традиционные трудовые договоры постепенно заменяются гражданско-правовыми договорами, что создает серьезные проблемы в обеспечении социальных гарантий работников, их трудовых прав и пенсионного обеспечения. В статье рассматривается неоднозначность правового статуса трудовой деятельности через онлайн-платформы, сложность классификации отношений между работниками и подрядчиками, а также актуальность понятия «экономически зависимый работник». Также рассматриваются практические сложности применения норм трудового права, когда функции работодателя выполняют несколько субъектов нестандартных трудовых отношений. Анализируются критерии, используемые в судебной практике для определения статуса работника, такие как независимость работника и степень контроля платформы. Подчеркивается недостаточность существующей в Узбекистане правовой базы для полного охвата данной формы занятости и предлагаются поправки в Трудовой кодекс и другие нормативные документы. Автор утверждает необходимость проведения правовых реформ для четкого определения таких трудовых отношений, обеспечения социальных гарантий и сокращения масштабов «теневой экономики».

Հիմնաբառեր՝ ոչ ստանդարտ աշխատանք, առցանց հարթակ, թվային տնտեսություն, քաղաքացիաիրավական պայմանագիր, աշխատանքային պայմանագիր, աշխատանքային հարաբերություններ, սոցիալական երաշխիքներ, հարթակային զբաղվածություն, իրավական կարգավիճակ:

Keywords: non-standard employment, online platform, digital economy, civil law contract, labor contract, labor relations, social guarantees, platform-based employment, legal status.

Ключевые слова: нестандартная занятость, онлайн-платформа, цифровая экономика, гражданско-правовой договор, трудовой договор, трудовые отношения, социальные гарантии, занятость на платформе, правовой статус.

ԳՈՐՈԴԵՑԿԱՅԱ ՄԱՐԻՆԱ
Իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ, «Բելառուսի պետական համալսարանի դատավորների, դատախազության աշխատակիցների, դատարանների և արդարադատության հիմնարկների վերապատրաստման և որակավորման բարձրացման ինստիտուտ» կրթական հիմնարկի գիտամեթոդական աշխատանքների գծով փոխտնօրեն

GORODETSKAYA MARINA
Candidate of Legal Sciences, Associate Professor, Deputy Director for Scientific and Methodological Work of Institute for Continuous training and Qualification Upgrading of Judges, Prosecutors and Legal Professionals at the Belarusian State University

ГОРОДЕЦКАЯ МАРИНА
Кандидат юридических наук, доцент, заместитель директора по научно-методической работе учреждения образования «Институт переподготовки и повышения квалификации судей, работников прокуратуры, судов и учреждений юстиции Белорусского государственного университета»

ՊՈՒՆԿՈ ՏԱՏՅԱՆԱ
Իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ, «Բելառուսի պետական համալսարանի դատավորների, դատախազության աշխատակիցների, դատարանների և արդարադատության հիմնարկների վերապատրաստման և որակավորման բարձրացման ինստիտուտ» կրթական հիմնարկի ուսումնական գործընթացի գծով փոխտնօրեն

PUNKO TATIANA
Candidate of Legal Sciences, Associate Professor, Deputy Director for Academic Affairs of Institute for Continuous training and Qualification Upgrading of Judges, Prosecutors and Legal Professionals at the Belarusian State University

ПУНЬКО ТАТЬЯНА
Кандидат юридических наук, доцент, заместитель директора по учебной работе учреждения образования «Институт переподготовки и повышения квалификации судей, работников прокуратуры, судов и учреждений юстиции Белорусского государственного университета»

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԸ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ – ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ*

AGE OF CONSENT TO PROCESSING OF PERSONAL DATA OF MINORS: COMPARATIVE – LEGAL STUDY*

ВОЗРАСТ СОГЛАСИЯ НА ОБРАБОТКУ ПЕРСОНАЛЬНЫХ ДАННЫХ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ: СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЕ ИССЛЕДОВАНИЕ*

Ամփոփագիր

Անչափահասի՝ օրենքով սահմանված իրավունքը՝ կառավարելու իր անձնական տվյալները՝ Բելառուսի՝ անձնական տվյալների վերաբերյալ օրենսդրության դրույթներին համապատասխան, սովորաբար կապված է 16 տարին լրանալու փաստի հետ: Հոդվածում հեղինակները կատարում են քաղաքացիական իրավունքի նորմերի և անձնական տվյալների մասին օրենսդրության դրույթների համեմատական-իրավական վերլուծություն, ինչպես նաև ուսումնասիրում են օտար երկրներում առկա մոտեցումներն անչափահասների կողմից իրենց անձնական տվյալների մշակման համար համաձայնություն տալու իրավունքի ծագման տարիքի վերաբերյալ: Հոդվածում հեղինակներն առաջարկում են անձնական տվյալների վերաբերյալ օրենսդրությունը ներդաշնակեցնել իրավունքի այլ ճյուղերի հետ: Վերլուծելով ճյուղային օրենսդրությամբ սահմանված՝ ֆիզիկական անձանց իրավունակության վերաբերյալ նորմերը՝ հեղինակներն ուշադրություն են դարձնում օրինական ներկայացուցիչների (ծնողների) կողմից տրված համաձայնությունների իրավական բնույթի տարբերության վրա, այսպես կոչված՝ «գործողություն կատարելու համաձայնություն» և համաձայնություն, որը անձնական տվյալների պաշտպանության մասի օրենքին համապատասխան՝ դրվում է անձնական տվյալների մշակման իրավական հիմքում:

Միջազգային և արտասահմանյան փորձի ուսումնասիրության արդյունքում հեղինակներն առաջ են քաշել անչափահասների անձնական տվյալների մշակման համաձայնություն տալու տարիքը որոշելու տարբեր մոտեցումներ և եկել այն եզրահանգման, որ անձնական տվյալների համատեքստում գործունակության տարիքի նվազեցումը հասարակական հարաբերությունների թվայնացման հետևանք է:

Annotation

The legal capacity of a minor to manage his personal data, in accordance with the provisions of Belarusian legislation on personal data, is generally associated with individuals who have reached the age of 16. In this article, the authors conduct a comparative legal analysis of the provisions of personal data legislation and civil law, examining the approaches established in foreign countries regarding the age at which minors are entitled to independently authorize the processing of their personal data. In the article, the authors suggest to harmonize personal data legislation with other branches of law. Analyzing the norms of industry-specific legislation concerning the scope of legal capacity of natural persons, the authors draw attention to the different legal nature of consent provided by legal representatives (parents) - namely, the so-called “consent to act” and the consents used as a legal basis for personal data processing, in accordance with the Personal Data Protection Act.

Based on a study of international and foreign experience, the authors identify various approaches to determining the age of consent for the processing of minors’ personal data and conclude that lowering the age of legal capacity with respect to personal data is a consequence of the “digitalization” of social relations.

Аннотация

Законная способность несовершеннолетнего управлять своими персональными данными в соответствии с положениями законодательства Республики Беларусь о персональных данных, как правило, связывается с достижением возраста 16 лет. В данной статье авторы проводят сравнительный правовой анализ положений законодательства о персональных данных и норм гражданского права, а также рассматривают подходы, установленные в зарубежных странах, в отношении возраста, с которого несовершеннолетние имеют право самостоятельно давать согласие на обработку своих персональных данных. В статье авторы предлагают гармонизировать законодательство о персональных данных с другими отраслями права. Анализируя нормы отраслевого законодательства в части правоспособности физических лиц, авторы обращают внимание на различный правовой характер согласий, предоставляемых законными представителями (родителями) на совершение определённых действий в отношении своих детей - так называемое «согласие на совершение действия» и согласия, выступающие в качестве правового основания для обработки персональных данных в соответствии с Законом о защите персональных данных.

В результате изучения международного и зарубежного опыта авторы выявили различные подходы к определению возраста согласия на обработку персональных данных несовершеннолетних и пришли к выводу, что снижение возраста дееспособности в отношении персональных данных является следствием цифровизации общественных отношений.

Հիմնաբառեր՝ անձնական տվյալներ, իրավական հիմք, համաձայնություն, իրավունակություն, անչափահաս, օրենսդրության ներդաշնակեցում:

Keywords: personal data, legal basis, consent, legal capacity, minor, harmonization of legislation.

Ключевые слова: персональные данные, правовое основание, согласие, дееспособность, несовершеннолетний, гармонизация законодательства.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ / CRIMINAL PROCEDURE AND CRIMINALISTICS / УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС И КРИМИНАЛИСТИКА

ԿՈՒՉԻՆ ՕԼԵԳ
Իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՌԴ Վ.Մ. Լեբեդևի անվան Արդարադատության պետական համալսարանի դատաբժշկական փորձաքննությունների և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր

KUCHIN OLEG
Doctor of Law, Professor, Academician of the Russian Academy of Natural Sciences, Professor of the Department of Forensic Expertise and Criminalistics, V.M. Lebedev Russian State University of Justice

КУЧИН ОЛЕГ
Доктор юридических наук, профессор, академик Российской академии естественных наук, профессор кафедры судебных экспертиз и криминалистики Российского государственного университета правосудия имени В.М. Лебедева

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ*

SOME ISSUES OF LEGAL REGULATION OF OPERATIONAL-INVESTIGATIVE ACTIVITIES IN RUSSIA*

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ОПЕРАТИВНО-РОЗЫСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В РОССИИ*

Ամփոփագիր

Օպերատիվ-հետախուզական գործունեությունը պետական իրավապահ գործունեության տեսակներից մեկն է, որն իրականացվում է պետական գործադիր իշխանության հատուկ մարմինների կողմից, որոնք իրենց գործառույթներն իրականացնելու համար օժտված են իրավական լիազորություններով: Դրա ծագումը տեղի է ունեցել պետության՝ որպես քաղաքական իշխանության կազմակերպման և հասարակության կառավարման ստեղծման հետ միաժամանակ: Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակները, խնդիրները և դրանց հասնելու մեթոդները որոշում են դրա դերը հանցավորության դեմ պայքարի համակարգում:

Հոդվածում քննարկվում են որոշ խնդիրներ, որոնք բխում են Ռուսաստանի Դաշնության 1995 թվականի օգոստոսի 12-ի թիվ 144 դաշնային օրենքի դրույթներից: Դրանք կրում են ինչպես գործնական, այնպես էլ գիտական և տեսական բնույթ, և դրանց օրենսդրական կիրառումը կարևոր է օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունավետության բարձրացման համար: Հոդվածում արծարծված մի շարք իրավական ասպեկտներ նախկինում ընդգծվել են տարբեր գիտնականների կողմից, սակայն ինչ-ինչ պատճառներով անտեսվել են օրենսդիրի կողմից: Սույն աշխատանքի նպատակն է օրենսդիրի ուշադրությունը հրավիրել օպերատիվ-հետախուզական գործունեության կարգավորման և դրա լուծում պահանջող խնդիրների վրա: Հոդվածում դիտարկվում է օպերատիվ-հետախուզական գործունեության հայեցակարգը և վեր հանվում դրա թերությունները: Հեղինակն իրականացրել է օպերատիվ-հետախուզական գործունեության հիմնական սուբյեկտների վերլուծություն: Ուսումնասիրության արդյունքները ներառում են օպերատիվ-հետախուզական օրենսդրության բարեփոխման որոշ առաջարկներ:

Annotation

Operational investigative activity is one of the types of state law enforcement activities carried out by special bodies of state executive body endowed with powerful legal powers for the implementation of their functions. Its origin took place simultaneously with the emergence of the state as an organization of political power and management of society. The goals and objectives of the ORDO and the ways to achieve them determine its position in the system of state measures to combat crime. The modern fight against crime, in which operational units are involved, cannot be perceived only as a set of specific measures to prevent and disclose criminal manifestations. The process of combating crime is a complex set of socio-economic, legal, administrative and other measures implemented by all government agencies.

The article discusses some of the problems arising from the norms of the Federal Law of the Russian Federation No. 144 dated 08/12/1995. They are both practical and scientific - theoretical in nature, and their legislative resolution is important for improving the effectiveness of operational investigative activities. A number of the legal aspects of the mentioned in the article were previously highlighted by various scientists, but for some reason they have not yet been noticed by the legislator. The purpose of this work is to draw the attention of the legislator to the issues of regulating operational investigative activities and requiring their permission. The article examines the concept of operational investigative activity and identifies its shortcomings. The author analyzes the main subjects of the ORDO. The study resulted in some proposals for the reform of operational investigative legislation.

Аннотация

Оперативно-розыскная деятельность является одним из видов государственной правоохранительной деятельности, осуществляемой специальными органами государственной исполнительной власти, наделенными властными юридическими полномочиями для реализации своих функций. Ее зарождение происходило одновременно с зарождением государства как организации политической власти и управления обществом. Цели, задачи ОРД и способы их достижения определяют ее положение в системе государственных мер борьбы с преступностью.

В статье рассматриваются некоторые проблемы, вытекающие из норм Федерального закона Российской Федерации № 144 от 12.08.1995 г. Они носят как практический, так и научно-теоретический характер, а их законодательное разрешение имеет значение для повышения эффективности оперативно-розыскной деятельности. Ряд затронутых в статье правовых аспектов ранее выделялся разными учеными, но почему-то до сих пор не был замечен законодателем. Целью настоящей работы является привлечение внимания законодателя к вопросам регулирования оперативно-розыскной деятельности и требующее своего разрешения. В статье рассмотрено понятие оперативно-розыскной деятельности и выявлены имеющиеся в нем недостатки. Автором проведен анализ основных субъектов ОРД. Итогом исследования стали некоторые предложения о реформировании оперативно-розыскного законодательства.

Հիմնաբառեր՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, օպերատիվ-հետախուզական իրավունք, ծառայողական հրահանգներ, օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման մարտավարություն և մեթոդաբանություն, պետություն, գործադիր իշխանություն:

Key words: operational search activities, operational search activities, operational search law, official instructions, tactics and methods of conducting operational search activities, the state, executive power.

Ключевые слова: оперативно-розыскная деятельность, оперативно-розыскные мероприятия, оперативно-розыскное право, служебные инструкции, тактика и методика проведения оперативно-розыскных мероприятий, государство, исполнительная власть.

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՍԵՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Արդարադատության ակադեմիայի դասախոս

MARTIROSYAN ARSEN
Candidate of legal sciences, Associate Professor,
Lecturer at the Academy of Justice

МАРТИРОСЯН АРСЕН
Кандидат юридических наук, доцент,
преподаватель Академии юстиции

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳԱՂՏՆԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՀԱՐՑԵՐ*

SOME PROBLEMATIC ISSUES RELATED TO THE LEGAL REGULATION OF SECRET INVESTIGATIVE ACTIONS PROVIDED BY THE CRIMINAL PROCEDURE CODE OF THE REPUBLIC OF ARMENIA*

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМНЫЕ ВОПРОСЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ СЕКРЕТНЫХ СЛЕДСТВЕННЫХ ДЕЙСТВИЙ, ПРЕДУСМОТРЕННЫХ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫМ КОДЕКСОМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ*

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված գաղտնի քննչական գործողությունների իրավական կարգավորմանը վերաբերող առանձին խնդրահարույց հարցերի վերլուծությանը:

Հոդվածի շրջանակներում հեղինակի կողմից քննարկման առարկա է դարձվում առանց տեխնիկական միջոցների՝ անմիջականորեն, վիզուալ իրականացված ներքին դիտում գաղտնի քննչական գործողության արդյունքների՝ որպես ապացույցի օգտագործման թույլատրելիության հնարավորության հարցը, որի կապակցությամբ հեղինակը առաջարկում է՝ կա՛մ օրենսդրորեն բացառել նշված եղանակով ներքին դիտում գաղտնի քննչական գործողության կատարման դատավարական հնարավորությունը, կա՛մ նախատեսել քրեական վարույթի ընթացքում դրա՝ որպես ապացույցի օգտագործման անհնարինության հանգամանքը՝ հաշվի առնելով, որ այդ եղանակով ստացված տեղեկությունները հնարավոր չէ գնահատման ենթարկել:

Առաձին քննարկման առարկա է դարձվում նաև կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում գաղտնի քննչական գործողության ժամկետի երկարացման հնարավորության հարցը, այն պայմաններում, երբ դատարանի նախորդ որոշմամբ սահմանված ժամանակահատվածում տարբեր օբյեկտիվ պատճառներով հետաքննության մարմնի կողմից հնարավոր չի լինում կատարել կաշառքի առարկայի հանձնում: Առկա օրենսդրական կարգավորումների և պրակտիկայի վերլուծության արդյունքում՝ հեղինակը, նախ, փաստում է, որ նման իրավիճակներում հնարավոր չէ քննարկվող գաղտնի քննչական գործողության ժամկետի երկարացում, ապա՝ առաջարկում է օրենսդրական փոփոխությունների եղանակով հաղթահարել նշված բացը՝ մյուս գաղտնի քննչական գործողությունների օրինակով այդպիսի դատավարական հնարավորություն նախատեսելով:

Հոդվածի շրջանակներում քննարկվում են նաև գաղտնի քննչական գործողությունների կատարման անհնարինության դեպքում հետաքննության մարմնի կողմից արձանագրություն չկազմելու իրավաչափության, ինչպես նաև հեռախոսային հաղորդակցության վերահսկման արձանագրության մեջ ձայնագրության բառացի վերարտադրության հնարավորության բացակայության պայմաններում (օրինակ՝ երբ անձինք հաղորդակցվում են բարբառով կամ օտար լեզվով) պրակտիկայում ի հայտ եկող խնդիրների հաղթահարմանը վերաբերող հարցեր:

Արդյունքում՝ հեղինակի կողմից ներկայացվում են կոնկրետ առաջարկներ, որոնք միտված են ոչ միայն գաղտնի քննչական գործողությունները սահմանող քրեադատավարական նորմերի կատարելագործմանը, այլև գործնականում դրանց կիրառման ընթացքում առաջացող խնդիրների հաղթահարմանը:

Annotation

The article is devoted to analyze of several problematic aspects regarding the legal regulation of secret investigative actions provided by the new Criminal Procedure Code of Armenia.

Հեղինակը ներկայացրել է իրային և պարտավորական իրավունքների սահմանազատման չափանիշների վերաբերյալ իր տեսակետը, դրանք տեղայնացրել կառուցապատման իրավունքի ուսումնասիրության մեջ և այդ չափանիշների կիրառությամբ վեր հանել նաև դրան բնորոշ հատկանիշները: Այդպիսով՝ հեղինակը եզրահանգել է, որ կառուցապատման իրավունքը գույքային իրավունքի տեսակ է և առավելապես մոտ է իրային իրավունքին, սակայն այն միաժամանակ ձևակերպվում է կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրով՝ այդպիսով կառուցապատողի և հողամասի սեփականատիրոջ միջև առաջացնելով նաև պայմանագրային իրավահարաբերություններ: Ընդ որում, իրային և պարտավորական իրավունքների պաշտպանության եղանակների զուգահեռ կիրառությունը կառուցապատման իրավունքի պաշտպանության շրջանակներում նույնպես հավաստում է դրա երկակի բնույթի մասին:

Ուստի, հեղինակը եզրահանգել է, որ կառուցապատման իրավունքն առավելապես ունի երկակի բնույթ, այսինքն՝ այնպիսի հատկանիշների միախառնուրդ է, որոնց ուժով՝ կառուցապատման իրավունքը և՛ իրային, և՛ պարտավորական իրավունքի տեսակ է համարվում, որպիսի եզրահանգումը կարող է օգտակար լինել գործնականում կառուցապատման իրավունքի ինստիտուտի ճիշտ մեկնաբանման և կիրառության հարցում:

Annotation

The issue of classifying property rights has always been the focus of theorists' attention. It has not only theoretical but also practical significance, since according to it, the characteristics of a specific right and the peculiarities of its application in practice are revealed.

The purpose of the research was to discuss the issue of classifying the right to construction as a type of subjective right.

The author presented her point of view on the criteria for delimiting real and obligatory rights, localized them in the study of the right to construction, and using these criteria, also revealed its characteristic features. Thus, the author concluded that the right to construction is a type of property right and is most closely related to the real right, but it is simultaneously formulated by a contract for the provision of the right to construction, thus also creating contractual legal relations between the developer and the owner of the land plot. Moreover, the parallel application of the methods of protecting real and obligatory rights within the framework of protecting the right to construction also confirms its dual nature.

Therefore, the author concluded that the right to construction is mostly of a dual nature, i.e. it is a mixture of features by which the right to construction is considered both a type of real and obligatory right, which conclusion may be useful in the correct interpretation and application of the institution of construction law in practice.

Аннотация

Вопрос классификации имущественных прав всегда находился в центре внимания теоретиков. Она имеет не только теоретическое, но и практическое значение, поскольку в соответствии с ней выявляются характеристики конкретного права и особенности его применения на практике.

Целью исследования стало обсуждение вопроса об отнесении права застройки к разновидности субъективных прав.

Автор представил свою точку зрения на критерии разграничения вещных и обязательственных прав, локализовал их на исследовании права застройки, а также, используя данные критерии, выявил его характерные особенности. Так, автор пришел к выводу, что право застройки является разновидностью имущественного права и наиболее тесно связано с вещным правом, но одновременно оформляется договором о предоставлении права застройки, тем самым также порождая договорные правоотношения между застройщиком и собственником земельного участка. Кроме того, параллельное применение способов защиты вещных и обязательственных прав в рамках защиты права застройки также подтверждает его двойственную природу.

Таким образом, автор пришел к выводу, что право застройки в большинстве своем имеет двойственную природу, то есть представляет собой сочетание признаков, по которым право застройки рассматривается одновременно как разновидность вещного и обязательственного права, данный вывод может быть полезен при правильном толковании и применении института права застройки на практике.

Հիմնաբառեր՝ կառուցապատման իրավունք, գույք, գույքային իրավունք, իրային իրավունք, պարտավորական իրավունք, բացարձակ բնույթ, իրավունքների պաշտպանություն:

Key words: right to construction, property, property right, real right, obligatory right, protection of rights.

Ключевые слова: право застройки, имущество, имущественное право, вещное право, обязательственное право, защита прав.

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՏԱՐԻԵԼ
Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

BARSEGHYAN TARIEL
Postgraduate Student at the Chair of Civil Law of the Yerevan State University

БАРСЕГЯН ТАРИЕЛ
Аспирант кафедры гражданского права Ереванского государственного университета

ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ. ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆ*

IMPLEMENTATION OF THE PRINCIPLE OF GOOD FAITH IN THE CIVIL LEGISLATION OF THE REPUBLIC OF ARMENIA: OBJECTIVE NECESSITY AND PRESSING URGENCY*

ВНЕДРЕНИЕ ПРИНЦИПА ДОБРОСОВЕСТНОСТИ В ГРАЖДАНСКОЕ ЗАКОНОДАТЕЛЬСТВО РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ОБЪЕКТИВНАЯ НЕОБХОДИМОСТЬ И ЗРЕЛАЯ НАСУЩНОСТЬ*

Ամփոփագիր

Գիտական հոդվածում կատարվել է բարեխղճության սկզբունքի տեսական և մեթոդաբանական վերլուծություն՝ ընդգծելով այդ սկզբունքի դերն ու նշանակությունը քաղաքացիական իրավունքի համակարգում: Հատկապես առանձնացվել են բարեխղճության սուբյեկտիվ և օբյեկտիվ չափանիշները և այդպիսիք քննարկվել են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության իրավակարգավորումների լույսի ներքո:

Անդրադարձ է արվել ՀՀ քաղաքացիական օրենսդրության փաստացի դրությանը և արձանագրվել է, որ բարեխղճության սկզբունքը Հայաստանում մինչ այժմ չի ստացել բավարար և հստակ իրավաբանական ամրագրում՝ ի հակադրություն ԱՊՀ մոդելային քաղաքացիական օրենսգրքի և հետխորհրդային մի շարք պետությունների օրենսդրության, որտեղ այս սկզբունքի գործառույթն ավելի խորքային և արդյունավետ է:

Հոդվածում ներկայացվել են հիմնավոր առաջարկություններ ՀՀ օրենսդրության բարեփոխման ուղղությամբ՝ բարեխղճության սկզբունքի լիարժեք իրավաբանական ընկալման և կիրառման համար: Այս քայլը դիտարկվել է որպես անհրաժեշտ նախապայման՝ իրավական համակարգի կայունության, իրավական մշակույթի զարգացման և արդարադատության արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Annotation

The scientific article presents a comprehensive theoretical and methodological analysis of the principle of good faith, emphasizing its significance and functional role within the civil law system. Particular attention is given to the distinction between the subjective and objective criteria of good faith in the context of the acting legislation of the Republic of Armenia.

A critical review of the existing state of Armenian civil legislation reveals that the principle of good faith has not yet received sufficient and clear normative-legal codification. This stands in contrast to the provisions of the CIS Model Civil Code and the legislation of several post-Soviet states, where this principle is more deeply and effectively implemented.

The article offers well-founded recommendations for improving the legislative framework of the Republic of Armenia, aimed at the full integration and legal consolidation of the principle of good faith. Such legislative reform is viewed as a necessary prerequisite for ensuring the stability of the legal system, the development of legal culture, and the enhancement of the judiciary's effectiveness.

Аннотация

В научной статье проведён комплексный теоретико-методологический анализ принципа добросовестности с акцентом на его значении и функциональной роли в системе гражданского права. Особое внимание уделено разграничению субъективных и объективных критериев добросовестности в контексте действующего законодательства Республики Армения.

Произведён критический обзор текущего состояния гражданского законодательства Армении, в ходе которого выявлено, что принцип добросовестности до настоящего времени не получил достаточного и чёткого нормативно-правового закрепления. Это контрастирует с положениями модельного гражданского кодекса СНГ и законодательствами ряда постсоветских государств, где данный принцип реализован более глубоко и эффективно.

В статье представлены аргументированные рекомендации по совершенствованию законодательной базы Республики Армения, направленные на полноценное внедрение и правовое закрепление принципа добросовестности. Такая законодательная модернизация рассматривается как необходимое условие для обеспечения стабильности правовой системы, развития правовой культуры и повышения эффективности судебной систем.

Հիմնաբառեր՝ բարեխղճություն, արդարացիություն, ողջամտություն, հավասարություն, սոցիալական իդեալ, սկզբունք, օբյեկտիվ, սուբյեկտիվ, տեսություն, կանխավարկած:

Key words: Good faith, justice, reasonableness, equality, social ideal, principle, objective, subjective, theory, presumption.

Ключевые слова: добросовестность, справедливость, разумность, равенство, социальный идеал, принцип, объективный, субъективный, теория, презумпция.

ՊՈՂՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ
«Կառուցապատողների հայկական ասոցիացիա» ՀԿ իրավաբան, իրավագիտության մագիստրոս

POGHOSYAN NUNE
Lawyer of the «Armenian Association of Developers» NGO, Master of Laws (LL.M.)

ПОГОСЯН НУНЕ
Юрист ОО «Армянская ассоциация застройщиков», магистр права

ԱՐԴՅՈՔ ԿԱՄԱՎՈՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱԱՀ-ՈՎ ՀԱՐԿՈՒՄԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ*

WHETHER THE TAXATION OF PRO BONO ADVOCACY SERVICES WITH VAT COMPLIES WITH THE CONSTITUTIONAL AND INTERNATIONAL COMMITMENTS OF THE REPUBLIC OF ARMENIA*

СООТВЕТСТВУЕТ ЛИ ОБЛОЖЕНИЕ НДС ДОБРОВОЛЬНЫХ БЕЗВОЗМЕЗДНЫХ АДВОКАТСКИХ УСЛУГ КОНСТИТУЦИОННЫМ И МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫМ ОБЯЗАТЕЛЬСТВАМ, ПРИНЯТЫМ НА СЕБЯ РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ*

Ամփոփագիր

Սույն հոդվածը դիտարկում է ՀՀ-ում փաստաբանական ծառայություններ մատուցող առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից անհատույց մատուցվող փաստաբանական ծառայությունների՝ ԱԱՀ-ով հարկման առանձնահատկությունները: Այն ուսումնասիրում է իրավաբանական օգնություն ստանալու մարդու հիմնարար իրավունքի երաշխավորմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական և միջազգային իրավական պարտավորությունները՝ դրանք դիտարկելով ՀՀ Սահմանադրության և դրա փոփոխությունների, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի շրջանակներում, գնահատում անհատույց փաստաբանական ծառայությունների՝ ԱԱՀ-ով հարկման ազդեցությունը իրավաբանական օգնություն ստանալու մարդու հիմնարար իրավունքի իրացման սահմանադրորեն երաշխավորված հնարավորության նկատմամբ:

Հոդվածի նպատակն է վեր հանել ՀՀ ստանձնած միջազգային իրավական և սահմանադրական պարտավորությունները, որոնք ուղղված են իրավաբանական օգնություն ստանալու մարդու հիմնարար իրավունքի իրացման ու պաշտպանության ապահովմանը, վերլուծել ԱԱՀ-ով հարկման հնարավոր ազդեցությունը այդ իրավունքի իրացման վրա՝ ըստ ՀՀ հարկային օրենսգրքի 61-րդ հոդվածի փոփոխությունների: Հեղինակը դիտարկում է ՄԻԵԿ-ով և ՔՔԻՄԴ-ով, ՀՀ սահմանադրությամբ ամրագրված այդ իրավունքի ապահովման երաշխիքները, դրա առնչությամբ առկա դատական և փորձագիտական մեկնաբանությունները, ՀՀ սահմանադրական դատարանի դատական պրակտիկան, քննարկում անհատույց փաստաբանական ծառայությունների հարկման հարցում առկա միջազգային փորձը: Հեղինակը եզրահանգում է, որ փաստաբանական ծառայություններ մատուցող առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից անհատույց փաստաբանական ծառայությունների՝ ԱԱՀ-ով հարկմանն ուղղված կարգավորումները չեն բխում ՀՀ ստանձնած միջազգային իրավական և սահմանադրական պարտավորություններից, անհրաժեշտ է մասնագիտացված և իրավաբանական օգնություն ցուցաբերելու առավել լայն լիազորություններ ունեցող սուբյեկտների՝ փաստաբանների կողմից մատուցվող այդպիսի ծառայություններն ազատել ԱԱՀ-ով հարկումից՝ միաժամանակ սահմանելով իրավական որոշակիությունից և իրավունքի չարաշահման հնարավորության կանխման անհրաժեշտությունից բխող համապատասխան կարգավորումներ:

Annotation

This article examines the VAT implications of pro bono advocacy services provided by commercial organizations and personal enterprises in Armenia. It explores the constitutional and international obligations of the Republic of Armenia to ensure the fundamental human right to legal assistance, within the framework of the Armenian Constitution and its amendments, the European Convention on Human Rights, and the International Covenant on Civil and Political Rights. The article assesses the effect of subjecting pro bono advocacy services to VAT on the constitutionally guaranteed opportunity to access legal assistance.

The objective of the article is to identify Armenia's international and constitutional obligations related to the protection and implementation of the right to legal assistance and to evaluate the recent amendments to Article 61 of the RA Tax Code in this context. The author examines the guarantees provided by the ECHR, ICCPR, and the RA Constitution, relevant judicial and expert interpretations, and the case law of the RA Constitutional Court. The article also reviews international experience with taxation of pro bono advocacy services.

The author concludes that applying VAT to pro bono advocacy services provided by commercial organizations and personal enterprises is inconsistent with Armenia's legal obligations. It is recommended to exempt such services, when provided by qualified attorneys, from VAT, while introducing safeguards to ensure legal certainty and prevent abuse of rights.

Аннотация

В данной статье рассматриваются особенности налогообложения налогом на добавленную стоимость (НДС) безвозмездных юридических услуг, предоставляемых коммерческими организациями и индивидуальными предпринимателями, осуществляющими адвокатскую деятельность в Республике Армения. Анализируются международные и конституционные обязательства Армении по обеспечению фундаментального права человека на получение юридической помо-

щи, в контексте положений Конституции Республики Армения (включая её изменения), Европейской конвенции о защите прав человека и основных свобод (ЕКПЧ), а также Международного пакта о гражданских и политических правах (МПГПП).

Особое внимание уделяется оценке влияния налогообложения НДС безвозмездных адвокатских услуг на возможность реализации данного фундаментального права, закреплённого в Конституции Армении. Целью статьи является выявление международных и конституционных обязательств, принятых на себя Арменией, направленных на обеспечение и защиту права на юридическую помощь, а также оценка изменений статьи 61 Налогового кодекса РА в контексте этих обязательств.

Автор рассматривает гарантии, обеспечивающие реализацию данного права, закреплённые в ЕКПЧ, МПГПП и Конституции РА, анализирует существующие судебные и экспертные толкования, включая решения Конституционного суда Армении. Также анализируется международная практика налогообложения юридических услуг, оказываемых на безвозмездной основе.

В заключение автор приходит к выводу, что действующее регулирование, предусматривающее обложение НДС безвозмездных юридических услуг, оказываемых коммерческими организациями и индивидуальными предпринимателями, противоречит международным и конституционным обязательствам Армении. Предлагается освободить от НДС такие услуги, если они предоставляются адвокатами, обладающими специальной профессиональной квалификацией и расширенными полномочиями на оказание юридической помощи. Одновременно необходимо установить правовые механизмы, обеспечивающие правовую определенность и предотвращающие возможное злоупотребление правом.

Հիմնաբառեր՝ փաստաբան, կամավոր անհատույց փաստաբանական ծառայություն, իրավաբանական օգնություն ստանալու իրավունք, ավելացված արժեքի հարկ, հարկային օրենսգիրք, արդար դատաքննության իրավունք, արդարադատության մատչելիություն:

Keywords: advocate, pro bono advocacy services, right to legal assistance, value added tax, Tax Code, right to fair trial, access to justice.

Ключевые слова: адвокат, добровольная безвозмездная адвокатская помощь, право на получение юридической помощи, налог на добавленную стоимость, Налоговый кодекс, право на справедливое судебное разбирательство, доступ к правосудию.

ԴԱՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ / JUDICIAL LAW / СУДЕБНОЕ ПРАВО

ԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ
Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր

AMYAN MARGARIT
Vice-rector of the Academy of justice of the Republic of Armenia

АМЯН МАРГАРИТ
Проректор Академии юстиции Республики Армения

ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ*

PUBLIC TRUST AS A GUARANTEE OF JUDICIAL INDEPENDENCE*

ОБЩЕСТВЕННОЕ ДОВЕРИЕ КАК ГАРАНТИЯ НЕЗАВИСИМОСТИ СУДЕБНОЙ ВЛАСТИ*

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում են դատական իշխանության ներկայացուցիչների նկատմամբ հանրային վստահության աճին նպաստող գործոնները և մեխանիզմները: Մասնավորապես, թե ինչպե՞ս պետք է դատավորները խթանեն հանրային վստահության բարձրացմանը ազգային դատարանների նկատմամբ՝ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրենց լիազորություններին համապատասխան: Դատական համակարգի նկատմամբ հանրային ընկալումները հաճախ լի են դատարանների ինստիտուցիոնալ դերի և նրանց իրավասության սահմանափակումների, ինչպես նաև դատարանի կոմից կայացված որոշումների նկատմամբ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ թյուրըմբռնումներով: Կարևոր հանգամանք է նաև այն, թե ինչպես է դատական համակարգը ներկայացվում և դիտվում հասարակության ներկայացուցիչների կողմից սոցիալական մեդիայի պրիզմայի միջով: Այս ոլորտում, բնականաբար, առկա են մարտահրավերներ՝ երաշխավորելու, որ դատական տեղեկատվությունը ամբողջական, ճշգրիտ և ժամանակին հասանելի լինի հանրությանը: Միաժամանակ դատավորները իրենց հերթին ունեն խոչընդոտներ՝ մասնակցելու, օրինակ, հանրային քննարկումներին կամ ազատ շփում ունենան սոցիալական մեդիայի հետ: Վերոնշյալ իրավիճակներում օպտիմալ լուծում գտնելու համար առաջարկվում են մի շարք միջոցառումներ՝ բարձրացնելու հանրային վստահությունն ու ըմբռնումը դատական համակարգի նկատմամբ:

Մասնավորապես, առաջարկվում է վերապատրաստումների միջոցով բարձրացնել դատավորների ունակությունները վարքագծի, բարեվարքության, հաշվետվողականության և աշխատավայրում շփումների ոլորտում, բարելավել դատական համակարգի և լրատվամիջոցների միջև հաղորդակցությունը՝ որպես դատական համակարգի գործունեության մասին ճշգրտությունը և դատարանների վերաբերյալ հանրության ընկալումը բարձրացնելուն նպաստող կարևոր միջոց և հաստատել կայուն երկխոսություն դատական իշխանության և իշխանության մյուս ճյուղերի, նրանց ներկայացուցիչների հետ:

Annotation

In the article are discussed the factors and mechanisms that contribute to the growth of public trust to the representatives of the judiciary. In particular, how judges should promote the growth of public trust in national courts, in accordance with their powers defined by the Constitution and laws. Public perceptions of the judiciary are often full of misunderstandings about the institutional role of courts and the limitations of their jurisdiction, as well as about issues of public interest regarding the decisions made by the court. Another important factor is how the judiciary is presented and viewed by representatives of society through the prism of social media. In this area, there are inevitable challenges in ensuring that judicial information is complete, accurate and timely available to the public. At the same time, judges, for their part, face obstacles to participate, for example, in public discussions or freely interact with social media. In order to find an optimal solution in the above situations, a number of measures are proposed to increase public trust and understanding of the judiciary.

In particular, it is proposed to enhance the skills of judges in the areas of conduct, ethics, accountability, and workplace communication through professional training, to improve communication between the judiciary and the media as an important means of increasing the accuracy of the functioning of the judiciary and the public's perception of the courts, and to establish a sustainable dialogue with the judiciary and other branches of government and their representatives.

Аннотация

В статье рассматриваются факторы и механизмы, способствующие росту общественного доверия к представителям судебной власти. В частности, каким образом судьи должны способствовать росту общественного доверия к национальным судам в соответствии со своими полномочиями, определенными Конституцией и законами. Общественное восприятие судебной системы зачастую полно недопонимания институциональной роли судов и ограничений их юрисдикции, а также вопросов, представляющих общественный интерес в отношении принимаемых судом решений. Другим важным фактором является то, как судебная система представлена и воспринимается представителями общества через призму социальных сетей. В этой области, естественно, возникают проблемы с обеспечением полноты, точности и своевременности предоставления судебной информации общественности. В то же время судьи сталкиваются с препятствиями,

Հիմնաբառեր՝ Հանրային վստահություն, դատական անկախություն, վերապատրաստումներ, դատական արհեստ, հաղորդակցության խթանում:

Keywords: Public trust, judicial independence, training, judgecraft, increase of communication.

Ключевые слова: общественное доверие, независимость судебной системы, профессиональная переподготовка, судебное мастерство, улучшение коммуникации.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ / CRIMINAL PROCEDURE AND CRIMINALISTICS / УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС И КРИМИНАЛИСТИКА

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԴԱՎԻԹ
Իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

MELKONYAN DAVIT
Candidate of Legal Sciences, Associate Professor at the Chair of Criminal Processing and Criminalistics of the Yerevan State University

МЕЛКОНЯН ДАВИТ
Кандидат юридических наук, доцент кафедры уголовного процесса и криминалистики Ереванского государственного университета

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանող

AVETISYAN LUSINE
Master's Program Student at the Faculty of Law of the Yerevan State University

АВЕТИСЯН ЛУСИНЕ
Магистрант юридического факультета Ереванского государственного университета

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԹՎԱՅԻՆ ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ*

THEORETICAL AND PRACTICAL ISSUES OF CONDUCTING A DIGITAL SEARCH IN CRIMINAL PROCEEDINGS*

ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ВОПРОСЫ ПРОВЕДЕНИЯ ЦИФРОВОГО ОБЫСКА В ПРОЦЕССЕ УГОЛОВНОГО СУДОПРОИЗВОДСТВА*

Ամփոփագիր

Հոդվածում հիմնավորվում է թվային խուզարկության՝ որպես ինքնուրույն քննչական գործողության օրենսդրական նախատեսման անհրաժեշտությունը և դրանով պայմանավորված՝ տեսության մեջ և իրավակիրառ պրակտիկայում առաջացած հիմնախնդիրները: Մասնավորապես, հոդվածում անդրադարձ է կատարվում բացառապես անձի համաձայնության հիմքով և դատավարական երաշխիքների շրջանցմամբ թվային խուզարկություն կատարելու իրավաչափությանը, մինչև թվային խուզարկություն կատարելը թվային տվյալների պատճենման հնարավորությանը, թվային խուզարկություն կատարելը թույլատրելու մասին դատարանի որոշման որոշակիությանը, թվային խուզարկություն կատարելիս վարույթն իրականացնող մարմնի չսահմանափակված հայեցողությանը, թվային խուզարկության արդյունքում պատճենված և վարույթին ոչ վերաբերելի թվային տվյալների ոչնչացման անհրաժեշտությանն առնչվող հարցերին:

Վերլուծվել է ՄԻԵԴ նախադեպային իրավունք, որի համաձայն՝ անձնական կյանքին ցանկացած միջամտություն պետք է բխի օրենքից, հետապնդի օրինական նպատակ և համարվի «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում», ապահովելով համաչափության և կանխատեսելիության սկզբունքները: Այս չափանիշները ենթադրում են, inter alia, որ՝

- դատարանի կողմից թույլատրված թվային խուզարկության որոշումը պետք է հստակ և սահմանային ձևով ամրագրի որոնվող տվյալների շրջանակը, ժամանակային միջակայքը և հետապնդվող նպատակները,
- անձի կամավոր համաձայնությունը չի վերացնում պետության պոզիտիվ պարտավորությունը՝ երաշխավորելու անձնական կյանքի պաշտպանությունը,
- վարույթին չվերաբերող կամ դատարանի կողմից չսանկցավորված թվային տվյալները պետք է բացառվեն ապացուցողական նյութերից և ոչնչացվեն օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում:

Հետազոտությունը կատարելիս վեր են հանվել օրենսդրական թերի կարգավորումները, ուսումնասիրվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարա նախադեպային պրակտիկան, միջազգային փորձը, որի արդյունքում ներկայացվել են օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Annotation

This article substantiates the need for the legislative recognition of digital search as an independent investigative measure and examines the theoretical and practical issues that arise in this context. In particular, it addresses questions concerning the admissibility of conducting a digital search solely with the consent of the individual concerned, the possibility of preliminary copying of digital data prior to the search, the mandatory requirement of a court order authorizing such a search, the extensive discretionary powers of the investigative body, and the necessity of destroying copied digital data that is irrelevant to the case.

The case law of the ECtHR has been analyzed, according to which any interference with private life must be based on law, pursue a legitimate aim, and be considered “necessary in a democratic society,” ensuring the principles of proportionality and foreseeability. These criteria imply, inter alia, that:

- a court decision authorizing digital searches must clearly and narrowly define the scope of the data sought, the relevant time frame, and the purposes pursued;
- a person’s voluntary consent does not remove the State’s positive obligation to guarantee the protection of private life;
- digital data unrelated to the proceedings or not sanctioned by the court must be excluded from evidentiary materials and destroyed within the time limits established by law.

The study identifies deficiencies in the current legislation, analyzes the case law of the European Court of Human Rights and the Cassation Court of the Republic of Armenia, and reviews international practice. Based on this analysis, the article formulates proposals aimed at improving the legal framework governing digital searches.

Аннотация

В статье обосновывается необходимость законодательного закрепления цифрового обыска в качестве самостоятельного следственного действия, а также анализируются возникающие при этом теоретические и практические проблемы. В частности, рассматриваются вопросы допустимости проведения цифрового обыска исключительно с согласия лица; возможности предварительного копирования цифровых данных до его проведения; обязательности судебного решения о санкционировании обыска; неограниченности дискреционных полномочий осуществляющего производство органа; а также необходимости уничтожения цифровых данных, скопированных в ходе обыска, но не имеющих отношения к делу.

Проанализирована прецедентная практика ЕСПЧ, согласно которой любое вмешательство в личную жизнь должно основываться на законе, преследовать легитимную цель и считаться «необходимым в демократическом обществе», обеспечивая принципы соразмерности и предсказуемости. Эти критерии предполагают, inter alia, что:

- решение суда о разрешении цифрового обыска должно чётко и ограниченно закреплять рамки разыскиваемых данных, временной промежуток и преследуемые цели;
- добровольное согласие лица не освобождает государство от позитивной обязанности гарантировать защиту личной жизни;
- цифровые данные, не относящиеся к производству или не санкционированные судом, должны быть исключены из доказательственного материала и уничтожены в сроки, предусмотренные законодательством.

В рамках исследования выявлены недостатки действующего законодательства, проанализирована судебная практика Европейского суда по правам человека и Кассационного суда Республики Армения, а также изучен международный опыт. На основе проведенного анализа сформулированы предложения по совершенствованию правового регулирования.

Հիմնաբառեր՝ քննչական գործողություն, թվային խուզարկություն, թվային տվյալներ, անձնական տվյալներ, օրենքով պաշտպանվող գաղտնիք, նախնական դատական վերահսկողություն, պետության պոզիտիվ պարտավորություն, որոշակիություն:

Keywords: investigative measures, digital search, digital data, personal data, legally protected protected secrets, preliminary judicial review, positive obligations of the State, legal certainty.

Ключевые слова: следственные действия, цифровой обыск, цифровые данные, персональные данные, защищенная законом тайна, предварительный судебный контроль, позитивные обязательства государства, правовая определенность.

ՄԱԳՈՄԵԴՈՎ ՇԱՄԻԼ
Ռուսաստանի Դաշնության դատախազության համալսարանի ասպիրանտ

MAGOMEDOV SHAMIL
Postgraduate student of the University of the Prosecutor's Office of the Russian Federation

МАГОМЕДОВ ШАМИЛЬ
Аспирант Университета прокуратуры Российской Федерации

ՕՐԵՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

PROSECUTORIAL SUPERVISION OVER THE EXECUTION OF LAWS IN THE REPUBLIC OF ARMENIA*

ПРОКУРОРСКИЙ НАДЗОР ЗА ИСПОЛНЕНИЕМ ЗАКОНОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ*

Ամփոփագիր

ՀՀ օրենսդրության մեջ դատախազական գործունեության նորմատիվ կարգավորումն ունի իր առանձնահատկությունները, որոնք առավել ցայտուն կերպով դրսևորվում են համեմատական-իրավական ուսումնասիրության մեջ:

ՀՀ Սահմանադրության տեքստի և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի մակերեսային վերլուծությունը հանգեցնում է նախնական եզրակացության առ այն, որ երկրում դատախազական ողջ գործունեությունը կենտրոնացած է քրեական իրավունքի վրա, քանի որ օրենքի հիմնական դրույթները հաստատում են դատախազության առաջնային գործառույթները՝ քրեական գործերի հարուցումից մինչև հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության վերահսկողությունը:

Միևնույն ժամանակ, ամփոփելով ՀՀ դատախազության փաստացի գործունեության արդյունքները, բաց տեղեկատվությունը, դատախազական գործունեության վերաբերյալ զեկույցները, հեղինակը եզրակացնում է, որ ՀՀ դատախազությունն օժտված է պետական և հասարակական շահերը պաշտպանելու համընդհանուր լիազորություններից մեկով՝ խախտված իրավունքների դատական պաշտպանությունն ապահովելու նպատակով:

Մինչդեռ իրականում այս լիազորության իրականացումն ուղեկցվում է ավելի լայն համատեքստով, քանի որ այն բացում է քրեաիրավական ոլորտից դուրս դատախազական վերահսկողության իրականացման համար իրավական գործիքների և արդյունավետ միջոցների մի ամբողջ շարք: Նշված եզրակացությունը վկայում է, որ Հայաստանի Հանրապետությունը հավատարիմ է «Դատախազության մասին» ԱՊՀ մոդելային օրենքի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածություններին:

Annotation

The normative regulation of prosecutorial activity in the legislation of the Republic of Armenia has its own peculiarities, which are most clearly manifested in a comparative legal study. A superficial analysis of the text of the Constitution of the Republic of Armenia and the Law on the Prosecutor's Office of the Republic of Armenia gives rise to the premature conclusion that all prosecutorial activities in the country are concentrated on the criminal law sphere, since the basic provisions affirm the key functions of the Prosecutor's Office from initiation of criminal cases to control over the legality of enforcement of coercive measures. Meanwhile, having summarized the results of the actual activities of the Prosecutor's Office of the Republic of Armenia, public information, reports on prosecutorial activities, the author concludes that the Prosecutor's Office of the Republic of Armenia is vested with one of the universal powers to protect state and public interests in order to ensure judicial protection of violated rights. Whereas in reality, the exercise of this authority is accompanied by a broader context, as it opens up a whole range of legal instruments and effective means of response for the implementation of prosecutorial supervision outside the criminal law sphere. This conclusion demonstrates the commitment of the Republic of Armenia to the agreements reached in the framework of the CIS Model Law “On Prosecutor's Office”.

Аннотация

Нормативное регулирование прокурорской деятельности в законодательстве Республики Армения обладает своими особенностями, которые наиболее ярко проявляются при сравнительно-правовом исследовании. Поверхностный анализ текста Конституции Республики Армения и Закона о прокуратуре Республики Армения порождает преждевременный вывод о том, что вся прокурорская деятельность в стране сконцентрирована на уголовно-правовой сфере, поскольку базовые положения утверждают ключевые функции прокуратуры от возбуждения уголовных дел до контроля за законностью исполнения принудительных мер. Между тем, обобщив результаты фактической деятельности прокуратуры Республики Армения, открытые сведения, отчеты о прокурорской деятельности, автор приходит к выводу о том, что прокуратура Республики Армения наделена одним из универсальных полномочий по защите государственных и общественных интересов в целях обеспечения судебной защиты нарушенных прав. Тогда как в действительности осуществление обозначенного полномочия сопровождается более широким контекстом, поскольку открывает целый спектр правовых инструментов и эффективных средств реагирования для реализации прокурорского надзора вне уголовно-правовой сферы. Указанный вывод свидетельствует о приверженности Республики Армении договоренностям, достигнутым в рамках Модельного закона СНГ «О прокуратуре».

Հիմնաբառեր: դատախազական հսկողություն, պատասխան գործողություն, դատախազության գործունեությունը, պետական և հանրային շահերի պաշտպանություն, համեմատական իրավունք, դատախազական գործունեություն.

Key words: prosecutorial supervision, response act, prosecutorial activities, protection of state and public interests, comparative law, prosecutorial activities.

Ключевые слова: прокурорский надзор, акты реагирования, деятельность прокуратуры, защита государственных и общественных интересов, сравнительное правоведение, прокурорская деятельность.

ՎԱՆՈՒՆԻ ՄԵՐԻ
ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի համակարգման վարչության փորձագետ

VANUNI MERI
Expert of the budget process coordination department of the Ministry of Finance of the RA

ВАНУНИ МЕРИ
Эксперт департамента координации бюджетного процесса министерства финансов РА

ԿԻԲԵՐՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ*

CYBERCRIME AND INTERNATIONAL CRIMINAL LAW: NEW APPROACHES TO LEGAL PROTECTION*

КИБЕРПРЕСТУПНОСТЬ И МЕЖДУНАРОДНОЕ УГОЛОВНОЕ ПРАВО: НОВЫЕ ПОДХОДЫ К ПРАВОВОЙ ЗАЩИТЕ*

Ամփոփագիր

Հոդվածը ուսումնասիրում է կիբերհանցագործության իրականացման գլոբալ մարտահրավերները և այն բազմաթիվ սպառնալիքները, որոնք վերջինս ներկայացնում է միջազգային քրեական իրավունքի համար: Հեղինակը վերլուծում է կիբերհանցագործությունների զարգացումը՝ անդրադառնալով ինչպես պարզ հաքերային գործողություններին, այնպես էլ՝ պետական կառույցների կողմից կազմակերպվող ավելի բարդ ու կազմակերպված հարձակումներին: Հոդվածում ընդգծվում է նաև կազմակերպված հանցավորության դերակատարությունը թվային ոլորտում և համաշխարհային մակարդակով դրա առկայության հետևանքները, որոնք դժվարացնում են միջազգային կառույցների ներկայացուցիչ հանդիսացող մասնագետների գործունեությունը: Հոդվածում լուսաբանվում են այնպիսի իրավական ակտեր, ինչպիսիք են օրինակ՝ *Կիբերհանցագործությունների մասին* Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, ինչպես նաև վեր են հանվում այն իրավական խնդիրները, որոնք խոչընդոտում են կիբերհանցագործների դեմ արդյունավետ պայքարի կազմակերպմանը: Հոդվածում հեղինակը անդրադառնում է թվային ապացույցների հավաքման ու օգտագործման բարդություններին և տարբեր երկրների իրավական համակարգերում դրանց օգտագործման արդի հարցերին: Հեղինակը, որպես լուծում, առաջարկում է նորագույն տեխնոլոգիաների՝ արհեստական ինտելեկտի և բլոկչեյնի կիրառումը՝ միջազգային համագործակցության հզորացման համար, որպեսզի ավելի արդյունավետ կերպով իրականացվի թվային դաշտի պահպանությունը և ավելի արդյունավետ կերպով կազմակերպվի պայքարն ընդդեմ կիբերհանցագործությունների: Ըստ հեղինակի՝ միայն միջազգային համագործակցությունը և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը կարող են կտրուկ բարելավել իրավիճակը:

Annoattion

The article examines the global challenges of combating cybercrime and the numerous threats it poses to international criminal law. The author analyzes the evolution of cybercrime, addressing both simple hacking activities and more complex, state-sponsored and organized attacks. The article also highlights the role of organized crime in the digital sphere and the global implications of its presence, which hinder the work of specialists representing international institutions. The article discusses legal instruments such as the Council of Europe Convention on Cybercrime and brings to light the legal issues that obstruct the effective organization of efforts against cybercriminals. It addresses the complexities involved in the collection and use of digital evidence, as well as the current challenges of using such evidence within various national legal systems. As a solution, the author proposes the use of cutting-edge technologies–such as artificial intelligence and blockchain–to strengthen international cooperation, aiming for more effective protection of the digital space and a better-organized fight against cybercrime. According to the author, only international cooperation and the implementation of modern technologies can significantly improve the situation.

Аннотация

Статья исследует глобальные вызовы, связанные с реализацией киберпреступлений, и многочисленные угрозы, которые они представляют для международного уголовного права. Автор анализирует развитие киберпреступлений, рассматривая как простые хакерские действия, так и более сложные и организованные атаки, проводимые государственными структурами. В статье также подчеркивается роль организованной преступности в цифровой сфере и последствия её глобального присутствия, которые усложняют деятельность специалистов, представляющих международные организации. Рассматриваются такие правовые акты, как, например, Конвенция Совета Европы о киберпреступлениях, а также поднимаются юридические проблемы, мешающие эффективной организации борьбы с киберпреступниками. Автор обращает внимание на сложности сбора и использования цифровых доказательств и на текущие вопросы их использования в правовых системах различных стран. В качестве решения автор предлагает использование новых технологий, таких как искусственный интеллект и блокчейн, для укрепления международного сотрудничества, чтобы более эффективно осуществлять защиту цифрового пространства и организовывать борьбу с киберпреступлениями. По мнению автора, только международное сотрудничество и внедрение современных технологий могут значительно улучшить ситуацию.

Հիմնաբառեր՝ կիբերհանցավորություն, միջազգային իրավունք, քրեական իրավունք,թվային անվտանգություն, կիբերհարձակումներ, իրավասություն, ապացույցներ, միջազգային համագործակցություն, արհեստական բանականություն, բլոկչեյն:

Keywords: cybercrime, international law, criminal law, digital security, cyberattacks, jurisdiction, evidence, international cooperation, artificial intelligence, blockchain.

Ключевые слова: киберпреступность, международное право, уголовное право, цифровая безопасность, кибератаки, юрисдикция, доказательства, международное сотрудничество, искусственный интеллект, блокчейн.

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ / CRIMINAL LAW AND CRIMINOLOGY / УГОЛОВНОЕ ПРАВО И КРИМИНОЛОГИЯ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԻՐԱԲ
Երևանի պետական համալսարանի
քրեական իրավունքի ամբիոնի դասախոս

HAMBARDZUMYAN VIRAB
Lecturer at the Chair of Criminal Law
of the Yerevan State University

АМБАРЦУМЯН ВИРАБ
Преподаватель кафедры уголовного права
Ереванского государственного университета

ԱՊՈՐԻՆԻ ԿԵՐՊՈՎ ԶԵՆՔ ԿՐԵԼԸ ՈՐՊԵՍ ԶԵՆՔԻ ԱՊՈՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՏԵՍՈՂ ՀԱՆՑԱԿԱԶՄԵՐԻ ՕԲՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ*

ILLEGAL CARRYING OF A WEAPON AS A MANIFESTATION OF THE OBJECTIVE ELEMENT OF CRIMES PROVIDING FOR CRIMINAL LIABILITY FOR THE ILLEGAL CIRCULATION OF WEAPONS*

НЕЗАКОННОЕ НОШЕНИЕ ОРУЖИЯ КАК ПРОЯВЛЕНИЕ ОБЪЕКТИВНОЙ СТОРОНЫ ПРЕСТУПЛЕНИЙ, ПРЕДУСМАТРИВАЮЩИХ УГОЛОВНУЮ ОТВЕТСТВЕННОСТЬ ЗА НЕЗАКОННЫЙ ОБОРОТ ОРУЖИЯ*

Ամփոփագիր

Սույն հոդվածի քննարկման առարկան են «զենքի ապօրինի կրում» հասկացության վերաբերյալ քրեական իրավունքի տեսությունում և իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մոտեցումները: Մասնավորապես, հոդվածում եզրահանգում է կատարվում այն մասին, որ դոկտրինալ մակարդակում, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում, «զենքի ապօրինի կրում» հասկացության տարակերպ մեկնաբանումն իրավակիրառ գործունեության ընթացքում ստանում է տարբեր դրսևորումներ՝ ձևավորելով խայտաբղետ, հաճախ՝ հակասական դատախազաքննչական և դատական պրակտիկա:

Միևնույն ժամանակ, հոդվածում հետևություն է կատարվում այն մասին, որ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում «զենքի ապօրինի կրում» հասկացության բովանդակությունն անձի մոտ (հագուստի մեջ կամ անմիջականորեն մարմնի վրա, ձեռքի պայուսակում, կապոցում կամ այլ պահոցներում) գտնվելու հանգամանքով սահմանափակելը տարակուսելի է և սպառնալիք է հասարակական անվտանգության, անձանց կյանքի, առողջության, ինչպես նաև պետական մարմինների և կազմակերպությունների բնականոն գործունեության համար:

Հոդվածում համակարգային վերլուծության են ենթարկվում «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում նախատեսված՝ «զենք կրել», «զենք պահել» և «զենք տեղափոխել» հասկացությունները և մտահանգում կատարվում այն մասին, որ դրանք չեն կարող անտեսվել ՀՀ քրեական օրենսգրքում զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի օբյեկտիվ կողմի դրսևորումները մեկնաբանելիս:

Հետազոտության արդյունքում վեր են հանվել նաև այն խնդիրները, որոնք կարող են ծագել իրավակիրառ գործունեության ընթացքում՝ դրանց հիման վրա ներկայացնելով վերաբերելի օրենսդրական նորմերի կատարելագործմանն ուղղված հիմնավորված առաջարկություններ:

Annotation

This article examines the approaches developed in criminal law theory and in law enforcement practice regarding the concept of 'illegal carrying of a weapon'. In particular, the article concludes that at the doctrinal level, as well as in law enforcement practice, the various interpretations of the concept of 'illegal carrying of a weapon' manifest differently during practical application, resulting in a diverse and often contradictory prosecutorial-investigative and judicial practice.

At the same time, the article finds that the limitation of the content of the concept of 'illegal carrying of a weapon' in the case law of the Court of Cassation to the circumstance of having the weapon on the person (in clothing or directly on the body, in a handbag, package, or other storage) is questionable and poses a threat to public safety, human life, health, as well as the normal functioning of state bodies and organizations.

In addition, the article presents a systemic analysis of the concepts of 'carrying a weapon', 'keeping a weapon', and 'transporting a weapon' as defined in the Law on the Regulation of the Circulation of Weapons, and concludes that these cannot be ignored when interpreting the manifestations of the objective element of the crimes providing for criminal liability for the illegal circulation of weapons under the Criminal Code of the Republic of Armenia.

Based on the research carried out in the article, the problems that may arise during law enforcement practice are identified, and substantiated proposals aimed at improving the relevant legislative norms are presented.

Аннотация

В статье рассматриваются подходы, сформировавшиеся в теории уголовного права и правоприменительной практике в связи с понятием «незаконное ношение оружия». В частности, в статье делается вывод о том, что на доктринальном уровне, а также в правоприменительной практике, разное толкование понятия «незаконное ношение оружия» проявляется по-разному, формируя разнородную и зачастую противоречивую прокурорско-следственную и судебную практику.

В то же время в статье делается вывод о том, что ограничение содержания понятия «незаконное ношение оружия» в прецедентном праве Кассационного суда лишь фактом нахождения оружия при лице (в одежде или непосредственно на теле, в ручной сумке, свертке или иных хранилищах) является сомнительным и представляет угрозу общественной безопасности, жизни и здоровью граждан, а также нормальной деятельности государственных органов и организаций.

Кроме того, в статье проведён системный анализ понятий «ношение оружия», «хранение оружия» и «перевозка оружия», предусмотренных Законом «О регулировании оборота оружия», и сделан вывод о том, что данные понятия не могут быть проигнорированы при толковании объективной стороны составов преступлений, предусматривающих уголовную ответственность за не-

законный оборот оружия в Уголовном кодексе Республики Армения.

В результате проведённого исследования выявлены проблемы, которые могут возникнуть в процессе правоприменительной деятельности, и на их основе представлены обоснованные предложения, направленные на совершенствование соответствующих законодательных норм.

Հիմնաբառեր՝ զենքի ապօրինի կրում, քրեական իրավունքի տեսություն, իրավակիրառ պրակտիկա, տարակերպ մեկնաբանում, բլանկետային նորմեր, օրենսդրական փոփոխություններ:

Key words: illegal carrying of a weapon, criminal law theory, law enforcement practice, varied interpretation, blanket norms, legislative amendments.

Ключевые слова: незаконное ношение оружия, теория уголовного права, правоприменительная практика, разнообразное толкование, бланкетные нормы, законодательные изменения.